ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ…….....3

2.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....4

3. ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ……...……5

4. «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ……5

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ……..……...…..7

6. «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎՋԵԲ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ……..……..…..8

7. ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ» ԲԱՂԱԴՐԻՉ……....8

Եզրակացություն……...……12

8.ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-«ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ԲԱՂԱԴՐԻՉ……...……13

Եզրակացություն……...……..……..26

9.ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ-«ԹԱՓՈՆՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉ……...26

Եզրակացություն.....……....31

10.ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ – «ՏՐԱՆՍՊՈՐՏ» ԲԱՂԱԴՐԻՉ……...…31

Եզրակացություն……..……...……..39

11.ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ–ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ…….…..39

Եզրակացություն……...……..…..43

17. Աղբյուրներ……...……44

18. Հավելված 1……..……45

19. Հավելված 2……..……59

20. Հավելված 3……..……63

21. Հավելված 4……..……68

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ- Ասիական զարգացման բանկ
ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԵՄ – Եվրոպական միություն
ԳԷՀ – Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵՆԲ-Եվրոպական ներդրումային բանկ
ԵՔ - Երևանի քաղաքապետարան
ԷԱ – էներգաարդյունավետություն
ԷԿՊ - Էներգախնայողության կատարողականի պայմանագիր
ԿԿԹ – կոշտ կենցաղային թափոն
ԿՔԳԾ - «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր
ՀԷՑ – Հայկական էլեկտրական ցանցեր
ՀՈԱԿ -Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԶԾ – Միավորված ազգային կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԶՄ – մաքուր զարգացման մեխանիզմ
ՊՈԱԿ -պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԲԳ - սեղմված բնական գազ
ՍԹԿ – սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՎԷ -վերականգնվող էներգետիկա
ՎԶԵԲ - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՓԲԸ – փակ բաժնետիրական ընկերություն
ՔԿԿԹ -քաղաքային կոշտ կենցաղային թափոն
ՖՎ – ֆոտովոլտային
E5P - Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերություն
GrCF - Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն CEE Bankwatch Network միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացրել է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրել է Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը և դրա կատարումը:

Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը մշակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) «Կանաչ քաղաք» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի պատրաստման համար ուսումնասիրվել են Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» մթնոլորտային օդի, կանաչապատման, Էներգետիկայի, թափոնների, տրանսպորտի վերաբերյալ բաժինները: Համացանցում առկա բաց տեղեկատվությունը, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) պաշտոնական կայքերը, զարգացման ծրագրերը: Իրականացվել է նամակագրություն Երևանի քաղաքապետարանի և «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև: Եզրահանգումները հիմնված են ինչպես հասանելի աղբյուրների, փաստաթղթերի, առկա իրավիճակի ուսումնասիրությունների, այնպես էլ Երևանի քաղաքապետարանի պատասխանների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

Արգիշտի Ա արքան մ.թ.ա. 782թ., հիմնադրել է Էրեբունի ամրոց-քաղաքը՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը: Քաղաքի տարածքը կազմում է 223 քկմ: Բնակչության թիվ 1076.5 հազար մարդ է, ինչը կազմում է Հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է, գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա: Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառներով և համեմատաբար խստաշունչ ձմեռներով:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է և տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային տարանցիկ հանգույցն է: Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 42.1%-ը, շինարարության՝ 53.9%-ը, մանրածախ առևտրի՝ 82.6%-ը, ծառայությունների՝ 85.5%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի՝ 77.6%-ը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 33.2%-ը:

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով, այդ թվում՝ մետրոյով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան:

Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացումը:

Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին, Երևանի քաղաքապետը:

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաք» ծրագիրը նախաձեռնվել է 2016 թվականին: Այն միտված է Բանկի գործունեության բոլոր երկրների քաղաքներում նպաստելու կանաչ տնտեսության անցմանը:

«Կանաչ քաղաքներ» ծրագրի նպատակն է.

1. Պահպանել բնապահպանական ակտիվների որակը (օդ, ջուր, հող և կենսաբազմազանություն) և օգտագործել այդ ռեսուրսները կայուն կերպով:
2. Մեղմացնել և հարմարվել կլիմայի փոփոխության ռիսկերին:

3. Ապահովել, որ բնապահպանական քաղաքականությունը և զարգացումները նպաստեն բնակիչների սոցիալական և տնտեսական բարեկեցությանը:[1]

Ծրագիրն ունի հետևյալ բաղադրիչները՝

1.**Կանաչ քաղաք գործողությունների՝ ծրագիր**: Այն գնահատում է բնապահպանական մարտահրավերները և առաջնահերթությունները, մշակում գործողությունների ծրագիր այդ մարտահրավերներին դիմակայելու համար:

2.**Կայուն ենթակառուցվածքային ներդրումներ**: Ներդրումները միտված են դյուրացնելու և խթանելու հանրային կամ մասնավոր կանաչ ներդրումները ջրի և կեղտաջրերի, քաղաքային տրանսպորտի, էներգիայի, շենքերի էներգաարդյունավետության, կոշտ թափոնների և այլ ոլորտներում, բարելավելու կլիմայի փոփոխությանը քաղաքի հարմարվողականությունը և կլիմայական ցնցումներին դիմադրողականությունը:

3.**Կարողությունների զարգացում**: Այս բաղադրիչը միտված է քաղաքային ղեկավարությանը և տեղական շահագրգիռ կողմերին տեխնիկական աջակցություն տրամադրել՝ ապահովելու, որ ենթակառուցվածքային ներդրումները և «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում նշված քաղաքականության միջոցառումները արդյունավետ մշակվեն, իրականացվեն և վերահսկվեն:

Ծրագիրն իրականացնում են տարբեր մարմիններ, տարբեր ֆինանսական ինստիտուտներ:

Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագրի (GrCF, 48171) համար հաստատված ընդհանուր դրամագլուխը 2016թ. կազմել է **250 միլիոն եվրո՝** հինգ տարի սպասվող տևողության համար: Նախատեսված էր Ծրագրի կենտրոնացում առաջին հերթին Կովկասում, Մոլդովայում և Բելառուսում, հետագայում՝ Արևմտյան Բալկաններում: Հատկացվող վարկերը նախատեսված են եղել կառավարությունների, քաղաքապետարանների, համայնքային սեփականություն հանդիսացող կոմունալ ընկերությունների և քաղաքային ծառայություններ մատուցող ընկերությունների համար:

Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագրի արագ իրականացման շնորհիվ 2018 թ. ներկայացվել է Կանաչ քաղաքներ շրջանակային ծրագիր 2 շրջանակը (GrCF2, 50440 և 50674) **700 միլիոն եվրոյի** նախատեսվող դրամագլխով հաջորդ հինգ տարիների համար: Այն նախատեսվել է քաղաքային ենթակառուցվածքներում ներդրումների՝ միաժամանակ կլիմայի փոփոխության և բնապահպանական մարտահրավերների հաղթահարման համար: GrCF2 դրամագլուխը 2020 թվականի հոկտեմբերին ավելացրել է՝ հասնելով **950 միլիոն եվրոյի**: 2021 թվականի նոյեմբերին GrCF2 պատուհան II-ի (53170) նորացումը հաստատվել է 2 միլիարդ եվրոյի դրամագլխով[2]:

Արդեն ՎԶԵԲ-ը հայտարարում է Ծրագրի մեկնարկից ի վեր ընդհանուր 5 միլիարդ եվրոյի դրամագլխի, 50-ից ավելի քաղաքների «Կանաչ քաղաք» ծրագրին միանալու,

[1] https://www.ebrdgreencities.com/green-cities/about/

[2] ՎԶԵԲ-ի 2022թ. մարտի ««Կանաչ քաղաքներ» ծրագրի միջանկյալ գնահատում» փաստաթուղթ

քաղաքապետարանների կողմից 22 «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերի հաստատման, 83 նախագծերի իրականացման մասին:[3]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի մաս են կազմում Երևան և Գյումրի քաղաքները:

Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» (ԿՔԳԾ) նախագիծը մշակել է «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության և գործընկեր կազմակերպությունների թիմը: Թիմի կազմում ընդգրկվել են անկախ ազգային, ինչպես նաև միջազգային փորձագետներ: ԿՔԳԾ-ի մշակումը ֆինանսավորվել է Չեխիայի կառավարության Պաշտոնական զարգացման աջակցության Տեխնիկական համագործակցության հիմնադրամի կողմից՝ ՎԶԵԲ-ի «Կանաչ տնտեսության քաղաքականության» երկխոսության շրջանակի միջոցով[4]: Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» մշակման համար ՎԶԵԲ-ի հետ համագործակցության շրջանակում Երևանի քաղաքապետարանի բյուջեին ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշմամբ[5]:

Ծրագիրը հիմնվել է ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնության ներքո 2016թ. մշակված և Երևանի ավագանու կողմից հաստատված Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի[6] վրա:

Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը մինչև 2030թ. իրականացվելիք կանաչ գործողությունների ռազմավարական փաստաթուղթ է՝ կառուցված «տեսլական - ռազմավարական նպատակներ - միջնաժամկետ թիրախներ» առանցքի շուրջ, որոնք հավելվել են նաև կարճաժամկետ գործողություններով (հաջորդ 3-5 տարիների համար): Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքի տնտեսական և սոցիալական աճը, մեղմել շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական ազդեցությունը, բարձրացնել Երևան քաղաքի բնապահպանական ակտիվների որակը՝ որպես հետևանք երաշխավորելով բնակիչների կյանքի որակի բարելավումը:

Ծրագիրն անդրադարձել է շրջակա միջավայրի վիճակին (օդ, հող, ջուր, կենսաբազմազանություն և կանաչ տարածքներ), շրջակա միջավայրի վրա ճնշումներին, տրանսպորտի, էներգամատակարարմանը, շենքերում էներգաարդյունավետությանը և արտաքին լուսավորությանը, արդյունաբերության ճյուղերին, թափոնների կառավարմանը, հողօգտագործմանը: ԿՔԳԾ ընդհանուր գործընթացը կազմված է չորս փուլերից: «Գործողությունների իրականացումը նախատեսվում է ԿՔԳԾ-ի գործընթացի 3-րդ փուլի ներքո և ներառում է ծրագրի իրականացման շարունակական մշտադիտարկումը: Առաջին եռամյա ժամանակահատվածից հետո կմեկնարկի ԿՔԳԾ-ի

[3] https://www.ebrdgreencities.com/
[4] https://www.yerevan.am/hy/yerevan-green-city-action-plan/
[5] https://www.yerevan.am/hy/elders-decisions/21-a/
[6] https://www.yerevan.am/hy/elders-decisions/558-a/

4-րդ փուլը, որի ընթացքում կգնահատվի առաջադիմությունը, բարելավման անհրաժեշտությունը, որի հիման վրա կարող են իրականացվել համապատասխան փոփոխություններ ԿՔԳԾ-ում»[7]:

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԶԵԲ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի շրջանակներում ՎԶԵԲ-ը ֆինանսավորել է երեք վարկային ծրագիր: Դրանք են՝

1. 2017թ. - «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում», որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 80 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 200 միլիոն դոլար է:[8]
2. 2021թ. - «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր (GrCF2 W2 - ENA Investment Program), որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 60 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 148,400,000.00 ԱՄՆ դոլար է, ներառյալ մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված:[9]
3. 2021թ. - «Երևան ավտոբուս նախագիծ» (GrCF2 W2 - Yerevan Bus Project), որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 20 միլիոն եվրո Երևանի քաղաքապետարանին: Ծրագրի ընդհանուր արժեքը 25 միլիոն եվրո է:[10]

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ» ԲԱՂԱԴՐԻՉ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախ (2022թ.)

- Մինչև 2022թ-ը աղտոտման բոլոր ազգային պարտադիր մակարդակները (արտահայտված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներով) բավարարված կլինեն և կհամապատասխանեն ԵՄ սահմանաչափերին:
- Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) ստեղծած կլինի Երևանի օդի աղտոտման ինտեգրված մոդել, որը հիմնված կլինի ներկա օդերևութաբանական տվյալների և անշարժ ու շարժական աղբյուրներից արտանետումների տվյալների վրա, ստուգված մշտադիտարկման տվյալների հետ և, որը կստեղծի օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ:

[7] https://www.yerevan.am/am/yerevan-green-city-action-plan/
[8] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html
[9] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/52868.html
[10] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/51749.html

- ԵՔ-ը սահմանած կլինի աղտոտիչների ինքնամշտադիտարկման տվյալների կանոնավոր ստացման մեխանիզմ: (Ձեռնարկությունների կողմից արտանետումների արժեքների ինքնահաղորդումը կսահմանվի կարճաժամկետ ժամանակահատվածների համար, օրինակ, 10 կամ 20 րոպեի արժեքների համար՝ այնպես, որ դրանք հնարավոր լինի համեմատել առավելագույն թույլատրելի արտանետումների կամ ԵՄ/ ԱՀԿ արժեքների հետ):

  Երևանը կունենա օդի աղտոտվածության մշտադիտարկման հուսալի անշարժ/ շարժական համակարգ:

- ԵՔ-ը մշակած կլինի իր երկրորդ ԿՔԳԾ-ը՝ ներառյալ օդի աղտոտման կրճատմանն ուղղված գործողությունները:

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին 2022թ. դեկտեմբերի 14-ին նամակով Երևանի քաղաքապետարանից խնդրել է տեղեկատվություն տրամադրել Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված կարճաժամկետ միջոցառումների մասին: Մթնոլորտային օդի մասով որպես կարճաժամկետ միջոցառում նամակում նշվել է «օդի որակի քաղաքականության և մեթոդաբանության, ինչպես նաև մշտադիտարկման համակարգի բարելավում» միջոցառումը (տե՛ս Հավելված 1): **Երևանի քաղաքապետարանի լրատվության վարչությունը 2022թ. դեկտեմբերի 22-ի № Հ/866 պատասխան նամակով «մթնոլորտային օդի. բաղադրիչի վերաբերյալ հայտնել է,** որ մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման նպատակով իրականացվում են կանաչապատման լայնածավալ աշխատանքներ՝ առաջնահերթությունը տալով առավել խոցելի տարածքների կանաչապատմանը: …Մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման, ջրային ռեսուրսների աղտոտման, տրանսպորտային միջոցների ավելացման գործոնների ազդեցությամբ պայմանավորված ածխաթթու գազի նվազեցման նպատակով Երևանի քաղաքապետարանն իրականացնում է օդի աղտոտման առկա աղբյուրների պարբերական մշտադիտարկում: Մայրաքաղաքի երթևեկությունը տրանսպորտային հոսքերից բեռնաթափելու նպատակով քաղաքապետարանը Երևանը շրջանցող ճանապարհների կառուցման մի շարք ծրագրեր է իրականացնում: Միաժամանակ, նոր տրանսպորտային ցանցի ներդնման և բարեփոխման շրջանակներում ձեռք բերվող նոր ավտոբուսներն աշխատում են հեղուկ գազով, ինչպես նաև ավելացվում են էլեկտրական հասարակական տրանսպորտային միջոցները, ստեղծվում են էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման ենթակառուցվածքները:

«Երևանի կայուն քաղաքային տրանսպորտի ներդնում» ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի Հայաստանում մշտական առաքելության կողմից Երևանի քաղաքապետարանին են տրամադրվել օդի որակի մոնիթորինգի սենսորներ:

«Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ օդի որակի ցուցանիշները գտնվում են լավ կամ բավարար միջակայքում»,- նշված է նամակում:

Երևանի քաղաքապետարանի դիտարկումը, որ «օդի որակի ցուցանիշները գտնվում են լավ կամ բավարար միջակայքում» չի համապատասխանում ՀՀ գլխավոր

դատախազության և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներին:

2022թ. հունիսի 26-ին ՀՀ գլխավոր դատախազության տարածած՝ Հայաստանի խոշոր քաղաքների մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ հաղորդագրության մեջ, մասնավորապես, նշված է. «Ուսումնասիրությունը փաստել է, որ Երևան քաղաքում և հանրապետության մի շարք խոշոր քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Հրազդանում և Արարատում, արձանագրվել են օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից կամ խտություններից գերազանցումների բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես՝ Երևան քաղաքում վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու և ազոտի երկօքսիդի աճման տենդենց: Մայրաքաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների՝ փոշու միջին տարեկան կոնցենտրացիաների (մգ/մ3) փոփոխությունները 2016-2021թթ. կազմել են՝ 0,0953-ից մինչև 0,1720, իսկ ազոտի երկօքսիդինը 0,0165-ից մինչև 0,0284: 2021թ. իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում ծծմբի երկօքսիդի, 0,4%-ում ազոտի երկօքսիդի, 1%-ում գետամերձ օզոնի համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից գերազանցումներ: Որոշ շեղումներով գրեթե նույն պատկերն է նաև Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ քաղաքներում»:[11]

Նկար 1. Փոշու ամպ Երևանում շինարարական աշխատանքների արդյունքում

Համեմատելով 2017-2021թթ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած տվյալները՝ պարզ է դառնում, որ մայրաքաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան 5 տարիների ընթացքում գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Հատկապես բարձր է Կենտրոն, Շենգավիթ, Նոր Նորք վարչական շրջանների փոշով աղտոտվածությունը: Փոշու մեջ մետաղներից ամենաբարձրն արձանագրած են պղինձը (Cu), նիկելը (Ni), մոլիբդենը (Mo): Փոշու մեջ առկա են նաև մանգան (Mn), կապար (Pb), ստրոնցիում (Sr), տիտան (Ti), քրոմ (Cr), բարիում (Ba), անագ

[11] https://www.prosecutor.am/am/mn/8644/

(Sn), լիթիում (Li), ծարիր (Sb), բիսմութ (B), վանադիում (V), մկնդեղ (As), կոբալտ (Co), բերիլիում (Be), կադմիում (Cd) և սելեն (Se):

Երևան քաղաքի փոշում որոշված մետաղների կոնցենտրացիաները (նգ/մ³) ներկայացված են սեզոնային գրաֆիկների տեսքով.



Նկար 2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը որոշել է Երևան քաղաքի փոշում որոշված մետաղների կոնցենտրացիաները ձմռանը և գարնանը



Նկար 3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը որոշել էԵրևան քաղաքի փոշում որոշված մետաղների կոնցենտրացիաները ամռանը և աշնանը

Ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների գերազանցումները 2017-2019թթ. Երևանում չեն արձանագրվել: 2020-2021թթ. գրանցվել են ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի գերազանցումներ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. «Շրջակա միջավայրի մասին տեղեկագրի» համաձայն՝ 2021թ-ին 2020թ-ի համեմատությամբ Երևանի մթնոլորտային օդում բարձրացել են հետևյալ ցուցանիշների պարունակությունները.ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ, փոշի և գետնամերձ օզոն: Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները հիմնականում գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները: 2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ, մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:[12]



Նկար 4. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը որոշել է Երևանի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Եզրակացություն

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանում մթնոլորտային օդի աղտոտվածությունն ավելացել է փոշու, ազոտի երկօքսիդի գերազանցումների հաշվին: Իսկ ծծմբի երկօքսիդի, գետնամերձ օզոնի պարունակությունները բարձրացել են՝ չգերազանցելով ՍԹԿ-ն:

[12] http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Tarekan%202021.pdf

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2022 թվականին 5 հասցեներում տեղադրվել են օդի մոնիթորինգի կայաններ, 2023 թվականին նախատեսվում է տեղադրել ևս 5 կայան և Reference NO2 analyzer. Reference PM (2.5 and 10) analyzer. Դրանից հետո հնարավոր կլինի կայանների տվյալները արտացոլել օդի աղտոտման ինտերակտիվ քարտեզում, որը կտեղակայվի Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:Ըստ փորձագետների՝ կայանների թիվն անբավարար է՝ հաշվի առնելով Երևանի բարդ ռելիեֆը, աղտոտման աղբյուրների բաշխման, ինչպես նաև պաշտպանիչ կանաչ գոտիների տեղակայման անհամասեռությունը:

Երևանում օդի որակի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի դիտարկումը, որ «օդի որակի ցուցանիշները գտնվում են լավ կամ բավարար միջակայքում» չի համապատասխանում ՀՀ Գլխավոր դատախազության և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած տվյալներին: Երևանի քաղաքապետարանի բացատրությամբ վերոնշյալ դիտարկումը վերաբերվել է Երևանի քաղաքապետարանի կողմից տեղադրված օդի աղտոտվածության մոնիթորինգի 5 կայանների 2022 թվականի միայն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների տվյալներին, որոնք համեմատելի չեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի՝ այլ մեթոդաբանությամբ չափված տվյալների հետ:

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - «ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ԲԱՂԱԴՐԻՉ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախ (2022թ.)

- Հաստատված և ապահովված կլինեն համայնքային էներգասպառման բոլոր ոլորտները ներառող համայնքային էներգետիկ պլանավորման և կառավարման նորագույն համակարգի հնարավորությունները և ունակությունը:
- Համայնքի բյուջեում հանրային շենքերում Էներգաարդյունավետության (ԷԱ) խթանման կանոնավոր և էական ֆինանսական հատկացումներ ԷԱ և վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) ֆինանսավորմանը, այդ թվում՝ խնայողություններից վճարման սխեմա՝ էներգաարդյունավետության հետագա շրջանառու ներդրումներով:
- Շենքերի ԷԱ չափորոշիչների պարտադիր կիրառում նոր շինարարություններում և կապիտալ վերակառուցումներում, կանաչ շինարարության տեխնոլոգիաների ինտեգրում:
- Էներգախնայողության կատարողականի պայմանագրերը (ԷԿՊ-եր) ինտեգրել քաղաքային գնումներում՝ նախաձեռնելով ԷԿՊ-երի ծրագրեր և կարողությունների զարգացում:
- Համագործակցության հաստատում դոնորների, ՄՖՀ-ների և մասնավոր հատվածի հետ՝ ԷԱ լայնամասշտաբ ներդրումների համար բնակելի շենքերի հատվածում ճկուն և նպաստավոր ֆինանսավորման սխեմա առաջարկելու համար՝ առաջնորդվելով բազմաբնակարան շենքերում ԷԱ փոքրածավալ վերափոխումների համար ֆինանսավորման օրինակներով:

- Էներգախնայողության կատարողականի պայմանագրերը (ԷԿՊ-եր) ինտեգրված կլինեն քաղաքային գնումներում՝ նախաձեռնելով ԷԿՊ-երի ծրագրեր և կարողությունների զարգացում
- Հանրային շենքերի 75%-ը կօգտագործի վերականգնվող էներգիայի աղբյուրներ, օրինակ՝ արևային էներգիա, քաղաքային կոշտ և հեղուկ թափոններ, հանրային կանաչ տարածքներում սանիտարական էտումից գոյացած կենսազանգված:
- Նուբարաշենի քաղաքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում հավաքված մեթանից արտադրվում է էլեկտրաէներգիա:
- ԷԱ ներդրումները հանրային շենքերում ֆինանսավորելու նպատակով համայնքի բյուջեում կանոնավոր և էական հատկացումներ կնախատեսվեն՝ խնայողություններից վճարման սխեմայով և շրջանառու մեխանիզմով:
- Փողոցների լուսավորության արդյունավետությունը բարձրացված կլինի՝ միևնույն ժամանակ ընդլայնելով լուսավորության ցանցը և մեծացնելով լուսավորվող օբյեկտների թիվը: Սա պետք է, որ թույլ տա պահպանել կամ կրճատել ամբողջ ծառայության էներգասպառումը՝ միևնույն ժամանակ բարձրացնելով լուսավորության որակը և հարմարավետությունը քաղաքացիների համար:

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին 2022թ. դեկտեմբերի 14-ին նամակով Երևանի քաղաքապետարանից խնդրել է տեղեկատվություն տրամադրել Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված կարճաժամկետ միջոցառումների մասին: Էներգետիկայի վերաբերյալ նամակում նշվել են հետևյալ կարճաժամկետ միջոցառումները.

- համայնքային կառույցներում էներգետիկ կառավարման ներդնում և համայնքային էներգետիկայի կառավարիչների համար կարողությունների զարգացման իրականացում
- հանրային շենքերի ներքին լուսավորության համակարգերում էներգաարդյունավետ լուսատուների օգտագործում
- բակային տարածքների և բազմաբնակարան շենքերի մուտքերի արտաքին լուսավորության սարքերի համար արևային ՖՎ վահանակների օգտագործում (Տե՛ս Հավելված 1):

<u>Երևանի քաղաքապետարանի լրատվության վարչությունը 2022թ. դեկտեմբերի 22-ի № Հ/866 պատասխան նամակով էներգամատակարարման բաղադրիչի վերաբերյալ հայտնել է,</u> որ Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ, Նուբարաշեն, Էրեբունի, Շենգավիթ վարչական շրջաններում՝ բակերում, բազմաբնակարան շենքերում, վարչական շենքերում տեղադրվել են էներգախնայող LED լուսատուներ: Մի շարք բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային վահանակներ:

2021թ-ից աշխատանքներ են տարվում Երևան համայնքում էներգետիկ կառավարման համակարգ ներդնելու ուղղությամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Ըստ Երևանի քաղաքապետարանի «Եվրոպական միությունը Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակներում 97 բազմաբնակարան շենքերի բնակիչներ օգտվում

են իրենց շենքերի ներշենքային և աստիճանավանդակային հատվածների և բակային տարածքների բարձրորակ լուսավորությունից, ինչպես նաև ունեն այդ տարածքներում էլեկտրաէներգիայի սպառման նվազում մոտ 77%-ով և վերելակների էլեկտրաէներգիայի վճարումների նվազում մոտ 50%-ով:

Տեղադրված արևային կայաններն ու լուսավորության համակարգերը նվիրաբերվել են բնակիչներին: Շենքերից յուրաքանչյուրի համար ստեղծվել են նպատակային բանկային հաշիվներ, որտեղ կկուտակվեն բնակիչներից գանձված գումարները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին վաճառված էլեկտրաէներգիայից գոյացած եկամուտը: Իսկ կուտակված գումարը կուղղվի նվիրաբերված համակարգերի սպասարկմանը և բնակիչների որոշմամբ շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացմանը: Ծրագրի սոցիալական բաղադրիչի շրջանակներում շուրջ 257 անապահով ընտանիքի տրամադրվել են 5-ական լուսադիոդային լամպեր:

Ծրագրի իրականացման արդյունքում նշված շենքերում ակնկալվում է տարեկան կտրվածքով՝

- մոտ 933 ՄՎտ. ժամ էլեկտրաէներգիայի արտադրում արևային կայանների միջոցով

- 453 տոննա CO2 գազի արտանետման նվազում

- լուսավորության համակարգի փոխարինման արդյունքում կունենանք 395 ՄՎտ. ժամ էլեկտրաէներգիայի սպառման նվազում:

Ծրագրի իրականացման արդյունքում բազմաբնակարան շենքերի շուրջ 27.000 բնակիչ կապրի ավելի հարմարավետ պայմաններում:

Երևանում 2017-2022թթ. իրականացված էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրեր

- ✓ **2017թ. - «ՀԷՑ - Բաշխիչ ցանցի արդիականացում» ծրագիր**

Այս ծրագրի իրականացման համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 80 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 200 միլիոն դոլար է:[13] Ծրագիրն ուղղված է եղել բաշխիչ ցանցի արդիականացմանը, այդ թվում՝ Հայաստանի ողջ տարածքում խելացի հաշվառման ներդրմանը: Ծրագիրը միտված է էներգաարդյունավետության բարելավմանը՝ նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները, կրճատելու ածխածնի արտանետումները:

Ծրագիրը նախատեսել է.

- գոյություն ունեցող ենթակայանների և գծերի վերակառուցում և արդիականացում և հնացած սարքավորումների փոխարինում
- էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի ընդլայնում
- ցանցի ընդլայնում և նոր օգտվողների միացում

[13] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html

- նոր ավտոմատ կառավարման համակարգի տեղադրում և այլ օժանդակ ներդրումներ:[14]

✓ **2021թ. - «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի ներդրումային ծրագիր (GrCF2 W2 - ENA Investment Program)**

Այս ծրագրի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 60 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 148,400,000.00 ԱՄՆ դոլար է, ներառյալ մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված:[15] Ծրագիրը 2017 թվականին կնքված՝ 80 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով ծրագրի երկարացումն է «Հայաստանի էլեկտրական ցանցերի» 10-ամյա (2016-2027) ներդրումային ծրագրի 1-ին փուլի իրականացման համար: Այն ՀԷՑ-ին հնարավորություն է ընձեռել իրականացնել ներդրումային ծրագրի 2-րդ փուլի 2021-2022թթ.-ի կապիտալ ներդրումները, որոնք, ի թիվս այլ ոլորտների, ուղղված կլինեն նաև Հայաստանի երկու խոշոր քաղաքներին՝ Երևանին և Գյումրիին: Ինչպես նշված է Ծրագրի նկարագրում, այն կօգնի ՀԷՑ-ին բարելավել էներգաարդյունավետությունը, նվազեցնել տեխնիկական և առևտրային կորուստները և, հետևաբար՝ ջերմոցային գազերի արտանետումները: Ծրագիրը նաև նպաստելու է համակարգի արդիականացման և նոր ավտոմատ կառավարման և խելացի հաշվառման համակարգերի կիրառմանը, ինչը օգնելու է բարձրացնել էներգահամակարգի հուսալիությունն ու ճկունությունը՝ մատակարարման ընդհատման միջին ժամանակի զգալի կրճատմամբ, քանի որ այդ ընհատումները թե՛ խաթարիչ են, և թե՛ ծախսատար Գյումրիում և Երևանում բիզնեսների և այլ վերջնական օգտագործողների համար: Նախատեսվում է զանգվածային ներդնել Հայաստանում «խելացի» հաշվիչներ, որոնք թվային տնտեսության «խելացի» ցանցի կարևոր վերջնակետերն են: ՀԷՑ-ի ներդրումային ծրագիրն ուղղված է «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» սահմանված առաջնահերթություններին և մշակվել է՝ երկու քաղաքների քաղաքապետարանների հետ սերտորեն խորհրդակցելով և հաշվի առնելով «Կանաչ քաղաքների գործողությունների պլանները», որոնք ընկած են երկու քաղաքների նկատառումների հիմքում:[16]

ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 2023թ. հունվարի 10-ին նամակով դիմել է «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ը՝ խնդելով տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ երկու ծրագրերի կատարման մասին: (տես Հավելված 2)

<u>Ի պատասխան ԷկոԼուրի հարցման ՀԷՑ-ի գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանը 2023թ. հունվարի 17-ին N08-ԿՀ-05/24 նամակով հայտնել է,</u> որ Ընկերությունը 2016-2027թթ. համար պլանավորել և իրականացնում է լայնածավալ (347 միլիարդ դրամ) ներդրումային ծրագիր: Ծրագրի շրջանակում ի թիվս այլ նպատակների առկա են

[14] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/ena-modernisation-of-distribution-network.html
[15] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/52868.html
[16] Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր file:///C:/Users/User/Downloads/PSD%2052868%20(Armenian)%20(4).pdf

աշխատանքներ, որոնք միտված են էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը: Դրանցից առավել խոշորներն են՝

- Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրման,

- 6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինման ծրագիրը:

Արդյունքում բաշխիչ ցանցում էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների սահմանված 11,03% ցուցանիշը նվազել է՝ դառնալով 6,5% (2016-2022թթ.): Բաշխման ցանցում կորուստների կրճատումը կազմել է շուրջ 1,6 միլիարդ կՎտ.ժ, իսկ արդյունքում մթնոլորտ ջերմոցային գազերի արտանետման կրճատումը կազմել է շուրջ 684 հազար տոննա:

Կից աղյուսակում ներկայացնում ենք Ընկերության կողմից 2016-2027թթ. ընթացքում նշված ենթաուղղությունների մասին տեղեկատվությունը»:

Տեղեկատվություն

Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը միտված, Ընկերության կողմից 2016-2027 թվականների ընթացքում իրականացված և իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ

հազ. դրամ առանց ԱԱՀ

	Ենթաուղղություններ	2016-2022	2023-2027
1	Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրում	63 799 962	38 622 000
2	6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինում	5 548 306	222 000

Երևանի 2017-2022թ. զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2020 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի վարչական տարածքում նախատեսել է իրականացնել մոտ 45 կմ 0,4/6/10 ԿՎ մալուխային գծերի փոխարինման, բազմաբնակարան շենքերի շուրջ 560 մուտքերի էլեկտրամատակարարման տնտեսության վերակառուցման և 36 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների վերակառուցման աշխատանքներ: Փաստացի իրականացրել է 33 կմ 100 մ 0,4/6/10 ԿՎ մալուխային գծերի փոխարինման, բազմաբնակարան շենքերի 602 մուտքերի էլեկտրամատակարարման տնտեսության վերակառուցման և 47 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների վերակառուցման աշխատանքներ:[17]

- ✓ **Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր**

2022թ. ապրիլի 15-ին ՀՀ կառավարությունը հաստատեց Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական

[17] https://www.yerevan.am/uploads/media/default/0001/98/d5ebb355af14eab4467a3047aa06dabf5ff02102.pdf

աջակցության ծրագիրը:[18] Էներգաարդյունավետ վերանորոգման համար առևտրային բանկերի տրամադրված վարկի սահմանաչափը բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման դեպքում լինելու է ոչ ավելի, քան 7 միլիոն դրամը, իսկ անհատական բնակելի տների համար՝ ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը: Բանկը վարկը կտա 14 տոկոսով առավելագույնը: Կառավարությունը կսուբսիդավորի հետևյալ կերպ. սահմանամերձ բնակավայրերի համար վարկի տոկոսը կլինի զրո, գյուղական համայնքներում՝ 2 տոկոս, քաղաքային համայնքներում՝ Երևանից դուրս՝ 3 տոկոս, և Երևանում կլինի 5 տոկոս: [19]

Տրամադրած վարկով քաղաքացին կարող է պատերի, տանիքների, միջհարկային ծածկերի ջերմամեկուսացում իրականացնել, ձեռք բերել էներգաարդյունավետ շինարարական նյութեր և էներգախնայող տեխնիկա, արտաքին դռներ և պատուհաններ, ջեռուցման կամ ջրատաքացուցիչ կաթսա և ջեռուցման համակարգի բաղադրիչներ, հովացման համակարգեր, էներգաարդյունավետ օդափոխիչ, օդորակիչ, արևային համակարգեր, լուսադիոդային լամպեր և լուսատուներ, իրականացնել դրանց տեղադրում կամ փոխարինում:

Այս ծրագիրը կտևի մինչև 2023թ-ի հուլիսի 1-ը:

2023թ. հունվարի դրությամբ ծրագրից օգտվել է 1000-ից ավելի շահառու, տրամադրված վարկային գումարը գերազանցել է 2 միլիարդ դրամը, շահառուներին տրամադրվել է 40 միլիոն դրամի սուբսիդիա: Ծրագիրը փորձնական է, սակայն նախատեսվում է այն շարունակել:[20]

- ✓ **«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիր**

«ԵՄ-ն Երևանի համար. արևային համայնք» ծրագիրը գործնական փուլ է մտել 2020 թվականին: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 1,250,000 եվրո, որից ԵՄ ներդրումը 1,000,000.00 եվրո է, 250,004 եվրոն համաֆինանսավորվել է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ծրագրի գերխնդիրն ու գերնպատակն է եղել, խթանելով «կանաչ տնտեսական աճ»-ը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև բարելավել շուրջ 27,000 բնակիչների կյանքը:

Ծրագիրն իր բովանդակային և սոցիալական ազդեցության մասշտաբներով առաջինն ու միակն է ինչպես Երևանում, այնպես էլ Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության անդամ հանդիսացող մյուս քաղաքների շարքում: Ծրագիրը համահունչ է նաև Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» նպատակներին, քանի որ Ծրագրի իրականացման արդյունքում CO_2 արտանետումները կնվազեն տարեկան շուրջ 453 տոննայով:

Եվրոպական միության աջակցությամբ «Քաղաքապետերի Դաշնագրի» նախաձեռնության շրջանակում նախապես Երևանի 90 բազմաբնակարան շենքերի

[18] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=163421
[19] https://www.e-gov.am/gov-decrees/item/38347/
[20] https://www.ecolur.org/hy/news/energy/14599/

տանիքներին որոշվել է տեղադրել արևային ֆոտովոլտային կայաններ: 90 շենքի փոխարեն Ծրագրի շրջանակներում արևային ֆոտովոլտային համակարգեր են տեղադրվել 97 շենքերի տանիքներին: Դրանք ապահովում են վերելակների, շքամուտքերի, աստիճանահարթակների, ինչպես նաև բակերի լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիան:

Ծրագրով շենքերում ու բակերում տեղադրվել են նոր էներգախնայող LED լուսատուներ: Հաշվի առնելով ծագրի սոցիալական կարևոր բաղադրիչը՝ հնգական LED լուսատուներ են տրամադրվել շուրջ 300 անապահով ընտանիքների:

Ծրագրի իրականացման արդյունքում բնակիչները տնտեսում են իրենց միջոցներն ավելի քան 50%-ով: Ապահովվել է շուրջ 77%-ով էլեկտրաէներգիայի սպառման նվազում ընդհանուր օգտագործման տարածքներում:

Շենքերից յուրաքանչյուրի համար ստեղծվել են նպատակային բանկային հաշիվներ, որտեղ կուտակվելու են բնակիչներից գանձված գումարները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին վաճառված էլեկտրաէներգիայից գոյացած եկամուտը: Կուտակված գումարը կուղղվի անհատույց օգտագործման հանձնված համակարգերի սպասարկմանը և բնակիչների որոշմամբ շենքերում էներգախնայող ծրագրերի իրականացմանը:

Շենքերի ընտրությունը կատարվել է համատիրությունների միջոցով՝ հաշվի առնելով տարածքային համաչափ զարգացման սկզբունքը և ընդգրկելով բոլոր վարչական շրջանները՝ բացառությամբ Նորք Մարաշի: Ընտրությունն անելիս տեխնիկական չափորոշիչներից բացի հաշվի է առնվել նաև սոցիալական բաղադրիչը:

Ծրագրով մշակվել է «Կրկնօրինակման մոդել» և «Արևի էներգիան՝ քո տանը» ուղեցույցը**:** Ծրագիրն այսօր ամբողջությամբ և հաջողությամբ ավարտված է:

- ✓ **«Կլիմա-խելացի լուծումներ համայնքների համար» ծրագիր**

Ծրագրի **1-ին փուլի** ընդհանուր տևողությունը 18/04/l 2019 – 31/12/2019 թվականն է: Ծրագրի 1-ին փուլի ընդհանուր բյուջեն 110,840 դոլար է, որից 92,840 դոլար ներդրել է Երևանի քաղաքապետարանը, ՄԱԶԾ-ն ունեցել է 8000 դոլարի ներդրում և 10000 դոլարի բնեղեն ներդրում:[21]

Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բարձրացմանը, իրականացնելով քաղաքային ներդրումային ծրագրերը Երևանում[22]:

Աշխատանքներն իրականացվել են նաև «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի ենթակայության

[21] http://www.nature-ic.am/Content/Projects/1032/ProDoc%20-%20Climate%20Smat%20Solutions.pdf
[22] http://www.nature-ic.am/hy/projects/Climate-Smart-Solutions-for-Communities/1032#section3

«Երքաղլույս» ՓԲԸ-ում դեռևս 2015թ. ստեղծված էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամում կուտակված միջոցների հաշվին:

Ծրագրի 1-ին փուլում Երևանի լուսավորության համակարգերի էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքներ են իրականացվել.

(i) Շիրակի, Առնո Բաբաջանյան փողոցների և Կիևյան կամուրջի, նաև Լենինգրադյան փողոցի Կիևյան կամրջից մինչև Մոնթե Մելքոնյան փողոց ընկած հատված

Իրականացված գործողությունների արդյունքը.

- 368 տեղադրված լուսադիոդային լուսատուներ
- 9 լյուքսով լուսավորվածության մակարդակի ավելացում (նախկին՝ 16 լյուքս)
- 76% էներգասպառման նվազեցում
- 28055 ԱՄՆ դոլար՝ էներգասպառման և սպասարկման տարեկան ծախսերի խնայողություն
- 150 տոննա CO2 ջերմոցային գազերի տարեկան արտանետումների կրճատում
- 6 կմ ճանապարհային լուսավորության համակարգերի բարելավում
- 88 473 ԱՄՆ դոլար՝ լուսատուների ձեռքբերման արժեքի պարզ հետգնման ժամկետը 3,2 տարի է:[23]

(ii) Դավիթաշեն և Նուբարաշեն վարչական շրջանների, նաև Հալաբյան, Կիևյան, Շիրազի, Գրիգոր Հասրաթյան, Լենինգրադյան և Հակոբ Հակոբյան փողոցներ

Իրականացվող գործողությունների արդյունքը.

- 2493 տեղադրվող լուսադիոդային լուսատուներ
- 9 լյուքսով լուսավորվածության մակարդակի ավելացում (նախկին՝ 16 լյուքս)
- 76% էներգասպառման նվազեցում, գումարային դրվածքային հզորությունը 875 կՎտ-ից կնվազի և կկազմի 208 կՎտ
- 109 600 ԱՄՆ դոլար՝ էներգասպառման տարեկան ծախսերի խնայողություն
- 531 տ CO2՝ ջերմոցային գազերի տարեկան արտանետումների կրճատում
- 65,7 կմ՝ ճանապարհային լուսավորության համակարգերի բարելավում, 485 670 ԱՄՆ դոլար՝ լուսատուների արժեքի պարզ հետգնման ժամկետը 4,43 տարի է:[24]

(iii) Գայի, Արմենակյան, Գ.Հովսեփյան, Կողբացու, Զաքյան, Ֆուչիկի, Ռուբինյան և Դավիթ Անհաղթի փողոցների համար

Իրականացվող գործողությունների արդյունքը.

- 622՝ տեղադրվող լուսադիոդային լուսատուների քանակ
- Լուսավորվածությունը և լուսավորությունը հասել են նորմերով սահմանված մակարդակին
- 77% էներգասպառման նվազեցում, գումարային դրվածքային հզորությունը 319 կՎտ-ից կնվազի և կկազմի 74 կՎտ

[23] http://www.nature-ic.am/Content/Projects/1032/Factsheet%20Yerevan%205%20stage%20-%20arm.pdf
[24] http://www.nature-ic.am/Content/Projects/1032/Factsheet%20Yerevan%20Davidashen%20and%20Co%20-%20arm.pdf

- 77 000 ԱՄՆ դոլար՝ էներգասպառման տարեկան ծախսերի խնայողություն
- 337 տ CO2՝ ջերմոցային գազերի տարեկան արտանետումների կրճատում
- 11,9 կմ՝ ճանապարհային լուսավորության համակարգերի բարելավում, 138 176 ԱՄՆ դոլար՝ լուսատուների արժեքի պարզ հետգնման ժամկետն է մոտ 2 տարի:

Ծրագրի **2-րդ փուլի** տևողությունը 08.03.2021- 30.06.2025 թվականն է: Ծրագրի 2-րդ փուլի ընդհանուր բյուջեն 509,452.08 դոլար է, որից 501,452.08 դոլարը Երևանի քաղաքապետարանի ներդրումն է, 8,000.00 դոլարը ՄԱԶԾ-ի ներդրումն է:[25]

Ծրագրի 2-րդ փուլում Երևանի լուսավորության համակարգերի էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքներ են նախատեսվել.

(i) Աջափնյակ համայնքի, Թբիլիսյան խճուղու, Բաղալ Մուրադյան, Դավիթ Բեկ, Ռոստովյան և այլ փողոցների համար:

Սկսված 2021թ. օգոստոսից ընթանում է լուսավորության համակարգերի արդիականացում, որը ներառում է 3 խճուղի, 21 փողոց, 2 խաչմերուկ, 1 զբոսայգի, Հաղթանակի և Ֆիզիկայի ինստիտուտի թաղամասը, ընդ որում, աշխատանքներն ընդգրկում են 40 կմ ճանապարհներ:

Իրականացվող գործողությունների ակնկալվող արդյունքը.

- 1,804 տեղադրվող լուսադիոդային լուսատուներ
- Լուսավորվածության մակարդակի ավելացում՝ նորմերի պահանջներին հասնելու նպատակով:
- 74% էներգասպառման նվազեցում, գումարային դրվածքային հզորությունը 934 կՎտ-ից կնվազի և կկազմի 239 կՎտ
- 151,800 ԱՄՆ դոլար՝ էներգասպառման տարեկան ծախսերի խնայողություն
- 766 տ CO2՝ ջերմոցային գազերի տարեկան արտանետումների կրճատում
- 40,7 կմ՝ ճանապարհային լուսավորության համակարգերի բարելավում
- 361,844 ԱՄՆ դոլար՝ լուսատուների արժեքի պարզ հետգնման ժամկետը 2,4 տարի է:[26]

(ii) Ընտրված փողոցներ Երևանի Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի և Արաբկիր վարչական շրջաններում:

Այս փողոցների վերաբերյալ տվյալներ հրապարակված չեն, քանի որ ծրագիրը դեռ շարունակվում է: Այն կավարտվի 2025թ.:

✓ **«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագիր**

Ծրագրի տևողությունը 2017թ. հուլիսից 2023թ. հունիսն է: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 116,070,000 ԱՄՆ դոլար, որից՝ Կանաչ կլիմայական հիմնադրամը

[25] http://www.nature-ic.am/Content/Projects/1032/Factsheet%20Yerevan%20Gai,%20Rubinyants%20and%20Co%20-%20arm.pdf
[26] http://www.nature-ic.am/Content/Projects/1032/Factsheet%20Yerevan%20Ajapnyak%20and%20Co%20-%20arm.pdf

ֆինանսավորում է 20,000,000 ԱՄՆ դոլարի (դրամաշնորհ), ՄԱԶԾ-ն՝ 420,000 ԱՄՆ դոլարի (կանխիկ) և 1,000,000 ԱՄՆ դոլարի չափով (զուգահեռ), որը կառավարվելու է ՄԱԶԾ կողմից: Երևանի քաղաքապետարանը համաֆինանսավորում է 8,000,000 ԱՄՆ դոլարի չափով, ՀՀ կառավարությունը՝ 400,000 ԱՄՆ դոլար (բնեղեն), Եվրոպական ներդրումային բանկը՝ 86,250,000 ԱՄՆ դոլարի զուգահեռ համաֆինանսավորում: Նախատեսվել է նաև շուկայում առկա ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում:

Ծրագրի նպատակն է մասշտաբավորել Հայաստանում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղվող ներդրումները և նվազեցնել շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի պատկերը և դրանով խրախուսել մասնավոր հատվածի ներդրումներն ու նվազեցնել վառելիքային աղքատություն: Ծրագիրը ԷԱ արդիականացման ներդրումների համար բարենպաստ շուկայական միջավայր և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդել կստեղծի, որը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ՋԳ արտանետումների կրճատմանը (ներդրումների շուրջ 20 տարվա կյանքի ընթացքում՝ 5.1-ից մինչև 5.4 մլն տ CO_2), կանաչ աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը: Այն կխթանի նաև մասնավոր և հանրային հատվածի կողմից մոտավորապես 100 միլիոն ԱՄՆ դոլարի լրացուցիչ ֆինանսավորումը:

Ծրագիրը կնպաստի Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի կատարմանը, ծրագրի շահառուներ են նաև Հայաստանի այլ համայնքներ:

Ծրագրով նախատեսվում է վերակառուցել Երևան համայնքի ենթակայության մանկապարտեզների տանիքները: 6 մանկապարտեզում աշխատանքներն արդեն ավարտվում են: Առաջիկայում նախատեսվում է ըստ հերթականության կազմակերպել մանկապարտեզների բացման արարողությունները:

Ծրագրի արդյունքները դեռևս չեն ամփոփվել:

- ✓ **Քաղաքային լուսավորության ծրագիր**

Հայաստանի Հանրապետության և ՎԶԵԲ-ի միջև 2015 թվականի մայիսի 11-ին կնքվել է վարկային համաձայնագիր: Վարկի գումարը կազմում է 4.0 միլիոն ԱՄՆ դոլար[27]: Հայաստանի Հանրապետության և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերության (E5P) միջև 2015 թվականի հոկտեմբերի 20-ին կնքվել է դրամաշնորհային համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 2016 թվականի սեպտեմբերի 30-ին: Դրամաշնորհի գումարը կազմում է 1.9 միլիոն եվրո:[28]

Ծրագրի շրջանակներում նախատեսվել է Երևան քաղաքի թվով 28 փողոցների

• էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով

• փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները

[27] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/yerevan-street-lighting-project.html

[28] https://sudipyerevan.am/%D5%A5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80-2/

• առկա վերգետնյա մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով

• ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:

2017-2022թթ. Երևանի զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Երևան քաղաքի 28 փողոցներում էներգախնայող լուսավորության ցանցի անցկացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքներն ամփոփվել և ՎՋԵԲ-ի կողմից հաստատվել են 2018 թվականի դեկտեմբերին: Մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել «Օննինեն» և «Էնստո» ընկերությունների համատեղ ձեռնարկությունը, որոնց հետ միասին հանդես են եկել ենթակապալառուներ էյէֆ ինֆրասթրաքչր փլաննինգը, «Էյ/Էս էյէֆ լայթինգ» ՍՊԸ-ն, «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ն և «Քարամյանչին» ՍՊԸ-ն: Պայմանագրի արժեքը կազմել է 6,064,940.87 ԱՄՆ դոլար (ներառյալ հարկերը): Պայմանագիրը կքնվել է 2019թ. հունվարի 11-ին, աշխատանքների մեկնարկը նախատեսվել է 2019թ. փետրվարի 15-ից: Աշխատանքները պետք է իրականացվեին 14 ամսում: Սակայն տարաբնույթ խնդիրների և խոչընդոտների պատճառով աշխատանքները ժամանակին չեն ավարտվել: **2019-2021թթ. 28 փողոցներում լուսավորության համակարգի փոփոխության աշխատանքների իրականացման արդյունքների մասին տվյալներ չկան: 2022թ. աշխատանքներ են սկսել իրականացվել 6 փողոցներում, սակայն ի հայտ եկած խնդիրների արդյունքում, դրանք անավարտ են մնացել:** 2022թ. Երևանի զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության մեջ նշված է. «28 փողոցներից Թումանյան, Վարդանանց փողոցներում, Մյասնիկյան պողոտայում, Աճառյան փողոցում, Խորենացի փողոցում, Ամիրյան փողոցում իրականացվել են աշխատանքներ: Իրականացվել են հենասյուների բետոնե հիմքերի, հենասյուների, բարձակների և LED լուսատուների տեղադրման աշխատանքներ: **Կապալառու կազմակերպության կողմից աշխատանքները սկսվել են իրականացվել Թումանյան փողոցից՝ խրամուղիները քանդելով մայթերում, սակայն մրցույթով սահմանված տեխնիկական առաջադրանքների ոչ լիարժեք լինելու պատճառով, նաև հողային աշխատանքների իրականացման ընթացքում առաջացել են չնախատեսված կոմունիկացիոն խոչընդոտներ, որոնք աշխատանքների կատարման նախագծերում ներառված չեն եղել, արդյունքում աշխատանքները դադարեցվել են:** …Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2022թ. փետրվարի 28-ը: Նախագծերում կատարված փոփոխությունների համաձայն, խրամուղիների քանդումը պետք է իրականացվեր միկրո խրամուղու եղանակով՝ մայթերի փոխարեն խրամուղին քանդելով երթևեկելի հատվածում: Նշված եղանակով աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հատուկ տեխնիկան Կապալառու կազմակերպությունը ներմուծել է 2021թ. հոկտեմբեր ամսվա վերջին՝ պատճառաբանելով Covid համավարակը և տրանսպորտային փոխադրումների խնդիրները: Տեխնիկան ներմուծելուց հետո 2021թ. նոյեմբերին աշխատանքները սկսել են իրականացվել Աճառյան փողոցում, որոնք սակայն տևել են մի քանի օր: Կրկին ի հայտ են եկել խոչընդոտներ, և աշխատանքները դադարեցվել են: Երևանի քաղաքապետարանի կողմից որոշում է կայացվել ավելացնել պայմանագրային արժեքը և երկարաձգել պայմանագրի աշխատանքների իրականացման ժամկետը մինչև 2023թ. նոյեմբերի 21-ը՝ համաձայն կապալառու կազմակերպության կողմից ներկայացված աշխատանքների կատարման ժամանակացույցի: «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Օննինեն Օյ» ֆիննական ընկերության միջև

կնքված պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկների ուղղությամբ աշխատանքները վերսկսվել են իրականացվել Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում և Աճառյան փողոցում: Պայմանագրում փոփոխություններ կատարելու համաձայնագրի նախագիծը հաստատվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից, որի հիման վրա համաձայնագիրը ստորագրվել է: Աշխատանքները շարունակվում են իրականացվել»:[29]

- ✓ **Երևանի էներգաարդյունավետության ծրագիր**

Ծրագրի 1-ին փուլի ընդհանուր արժեքը կազմում է 15 միլիոն եվրո, որից 7 միլիոն եվրո վարկ՝ Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ)[30], 5 միլիոն եվրո դրամաշնորհ՝ Արևելյան եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամից (E5P), 1 միլիոն եվրո դրամաշնորհ Կանաչ կլիմայի հիմնադրամից, որը տնօրինվում է ՄԱԶԾ կողմից և 2 միլիոն եվրո՝ Երևան համայնքի բյուջեից: Ծրագրի Վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ին, իսկ Դրամաշնորհային համաձայնագիրը 2018 թվականի հունիսի 8-ին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերում, մասնավորապես, մանկապարտեզներում, իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև տեղի կունենա արտանետվող CO_2 գազի նվազեցում:

Ծրագրի շրջանակներում առաջին փուլով ընտրվել է 29 մանկապարտեզ, որոնց համար իրականացվել է սեյսմիկ աուդիտ և էներգաաուդիտ: Նշված մանկապարտեզներից ընտրվել է 15 մանկապարտեզ հիմնանորոգման համար:[31]

Երևանի 2021թ. զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության համաձայն՝ թիվ 36, 49, 22, 23, 47, 48, 71, 74, 135, 109, 110, 81, 161 և 138 մանկապարտեզներում ընթանում են շինարարական աշխատանքները: Համաձայն կնքված պայմանագրերի՝ այս մանկապարտեզներում շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2022–2023թթ.: 2022թ. Ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել թիվ 49 մանկապարտեզը:

Երևանի քաղաքապետարանը 2019թ. դիմել է ԵՆԲ-ին Երևանի էներգաարդյունավետության ծրագրի 2-րդ փուլի իրականացման համար՝ ակնկալելով բանկից ստանալ 35 միլիոն եվրո: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվել է 37 միլիոն եվրո: Ծրագիրը գտնվում է գնահատման փուլում[32]:

---

[29] https://www.yerevan.am/uploads/media/default/0002/19/3fd4f4fa9ec20234060a5467bff534264fde4f9e.pdf
[30] https://www.eib.org/en/projects/all/20150124
[31] https://sudipyerevan.am/%d5%a5%d6%80%d6%87%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%a7%d5%b6%d5%a5%d6%80%d5%a3%d5%a1%d5%a1%d6%80%d5%a4%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a1%d5%be%d5%a5%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6/
[32] https://www.eib.org/en/projects/all/20180581

- ✓ **Նուբարաշենի քաղաքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում մեթանից էլեկտրաէներգիայի արտադրման մասին**

Երևան քաղաքի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի համաձայն՝ Նուբարաշենի քաղաքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայրից նախատեսված էր մեթանի կորզում և էլեկտրաէներգիայի արտադրություն: Կանխատեսվել էր մոտ 7.0 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիայի արտադրություն՝ սկսած 2019թ.: Նուբարաշենի աղբավայրում էլեկտրաէներգիա չի արտադրվել (տե՛ս Հավելված 3):

Երևանում ջերմոցային գազերի կրճատումների մասին

Ըստ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության՝ քաղաքային լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում ջերմոցային գազերի տարեկան արտանետումները կրճատվել են ավելի քան 4000 տոննա, 97 բազմաբնակարան շենքերում, մանկապարտեզներում, համայնքային ենթակայության կազմակերպություններում, Երևանի քաղաքապետարանի երկու վարչական շենքերում իրականացված ջերմաարդիականացման, էներգախնայողության բարձրացմանն ուղղված միջոցառումների, տեղադրված արևային ֆոտովոլտային կայանների շնորհիվ ապահովվել է ավելի քան 2500 տոննա տարեկան արտանետումների կրճատում:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի թափոնների տեսակավորման վարչության կողմից 2020 թվականից ի վեր թափոնների տեսակավորման գործառույթների շրջանակներում հավաքվել և վերամշակողներին է հանձնվել ընդհանուր քաշով 1.350 տոննա թափոն (պլաստիկ, թուղթ և ապակի)՝ ապահովելով 823,5 կգ CO_2 արտանետումների կրճատում:

«Երևանի քաղաքային նոր աղբավայր» ընկերության պահպանման և շահագործման տակ գործող աղբավայրի 8 հա տարածքում անցկացված խողովակներով թունավոր գազերը մղվում են կենսագազի հավաքման և այրման կայան ու ամբողջությամբ այրվում՝ բացառելով այդ նյութերի արտանետումը մթնոլորտ: Ծավալային տեսանկյունից հավաքվում և այրվում է 300-400 խմ/ժ արտադրողականությամբ մեթան գազ, որում մեթանի ծավալը 35-40% է: Այրումն արվում է 10000 °C բարձր ջերմաստիճանային պայմաններում, որպեսզի թերայրում տեղի չունենա: 2009-2023թթ. ընկած ժամանակահատվածում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ծավալները (CO_2 գազի արտանետումներին համարժեք) կազմել են 176,959 տ»:

2021թ. մեկնարկած «Երևանի ավտոբուս նախագիծը» պետք է նպաստի տարեկան 2,939 տոննա CO_2-ի արտանետումների կրճատմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տվյալների և Երևանի զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների տվյալների միջև կան անհամապատասխանություններ, ջերմոցային գազերի վերաբերյալ տվյալները լիարժեք չեն:

Մյուս կողմից Երևանի 2023թ. զարգացման ծրագրում նշվում է. «Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցություն առաջացնող շուրջ 400 կազմակերպություն: Մթնոլորտային օդի և հողերի որակի

վատթարացման հիմնական պատճառներից են նաև Երևան քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, որոնց թիվը կազմում է շուրջ 600 000, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողատարումները, հողի էրոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի արտանետումների ավելացումը շուրջ 10 անգամ, ինչը կլիմայի փոփոխության հիմնական գործոններից է»:[33]

Նշենք, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022թ. դեկտեմբերի 1-ի 422-Ա հրամանի համաձայն՝ Երևանում մթնոլորտային օդի վրա ներգործություն ունեցող կազմակերպությունների թիվը 689 է:[34] Այստեղ ևս առկա է տվյալների անհամապատասխանություն:

Եզրակացություն

Երևանում իրականացվում են տարբեր ծրագրեր՝ ուղղված էներգաարդյունավետության բարձրացմանը և էներգախնայողությանը, որոնց արդյունքում ակնկալվում է ջերմոցային գազերի կրճատում: Ոչ բոլոր ծրագրերն են անխոչընդոտ իրականացվել: Մասնավորապես, ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորված Քաղաքային լուսավորության ծրագիրը նախատեսված ժամկետում չի ավարտվել տարբեր խոչընդոտների պատճառով:

«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի դեպքում Երևանի քաղաքապետարանը նշում է 97 բազմաբնակարանների տանիքներին արևային համակարգեր տեղադրելու մասին, մինչդեռ քաղաքապետարանի իրականացրած աշխատանքների կատարողականների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ծրագրի առաջին փուլում համակարգեր տեղադրվել են 43 շենքերի վրա: Ծրագրի երկրորդ փուլի արդյունքների մասին հաշվետվություններում տեղեկատվությունը բացակայում է:

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի «Երքաղլույս» ՓԲԸ-ում ստեղծվել է էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամ, որի միջոցներն ուղղվում են Երևանի փողոցներում էներգաարդյունավետ լուսատուների տեղադրմանը: Ի շնորհիվ էներգաարդյունավետության հատուկ շրջանառու հիմնադրամի մեխանիզմների՝ ֆինանսական կայունության հնարավորություն է ստեղծվել, որը նպաստում է երկարաժամկետ հեռանկարային էներգախնայող և էներգաարդյունավետ ծրագրերի իրականացման համար:

Իրականացված ծրագրերի արդյունքներն ընդհանուր առմամբ վկայում են այն մասին, որ էներգախնայողությունը, որպես «Կանաչ քաղաք» ծրագրի գլխավոր նպատակներից, Երևանում իրականացվում է:

- ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - «ԹԱՓՈՆՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախ (2025թ.)

[33] https://www.yerevan.am/uploads/media/default/0002/16/637bc0a87d188ee0fa26578328b3924a055666cc.pdf
[34] http://env.am/storage/files/hraman422-2022.pdf

- Գոյացած ՔԿԿԹ-ների 100%-ը և այլ թափոնների 50%-ը կտեղադրվեն թափոնների տնօրինման կամ մշակման պատշաճ օբյեկտներում: Այդ օբյեկտները կվերանախագծվեն, կկառուցվեն և կշահագործվեն համաձայն ԵՄ (կամ այլ միջազգային) չափորոշիչների:
- Երևանը հաստատած կլինի Թափոնների կառավարման տասնամյա ծրագիր:
- ՔԿԿԹ-ներ և այլ թափոններ գոյացնողների 95%-ից ավելին կվճարի համապատասխան պարտադիր վճար աղբահանության և հեռացման համար:
- ՔԿԿԹ-ների վերամշակման ցուցանիշը կկազմի 15%-ից ավելի, այլ թափոնների համար՝ 30%:
- Տեսակավորման և վերամշակման ինտեգրված համակարգը ներդրված կլինի՝ հասույթները վերադարձնելով ՔԿԿԹ-ների կառավարման համակարգ (ՔԿԿԹ-ների կառավարման ծախքեր (> 10 %՝ տարեկան):
- Ազգային կոդավորման համակարգի համաձայն՝ ներդրված կլինի գոյացած և տնօրինված ՔԿԿԹ-ների՝ հանրությանը մատչելի տվյալների շտեմարան:
- «Կանաչ քաղաքի իրազեկման կենտրոնը» պարբերաբար կիրականացնի իրազեկման քարոզարշավներ և կարողությունների զարգացման միջոցառումներ:

Ի պատասխան «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի 01.25.2023թ. հարցման Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 06.02.2023թ. №01/16562-23 գրությամբ (տե՛ս Հավելված 3) հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Շիմիձու» կորպորացիայի միջև 10.03.2009թ-ին «Նուբարաշենի աղբավայրում բիոգազի հավաքման աշխատանքների իրականացման մասին» ՄԶՄ ծրագրի ներքո կնքված համաձայնագիրը, ճապոնական կողմի դիմումի համաձայն, դադարեցվել է: Ըստ Երևանի քաղաքապետի 2022թ. հունվարի 26-ի թիվ 271-Ա որոշման, Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում կենսագազի հավաքման և այրման կայանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին:

Նուբարաշենի աղբավայրում ջերմոցային գազերի կրճատման արդյունքում էլեկտրական էներգիայի արտադրություն չի իրականացվել՝ ելնելով մեթան գազի կորզման իրական և ծրագրի ընթացքում ակնկալվող արդյունքների անհամապատասխանությունից՝ կախված կորզված գազի քանակական և որակական ցուցանիշներից: Ըստ պատասխան նամակի՝ 2009-2023թթ. ընկած ժամանակահատվածում Նուբարաշենի աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ծավալները (CO2 գազի արտանետումներին համարժեք) կազմել են 176,959 տ:

Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերի փակման և Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման մրցույթը 2022 թվականի սեպտեմբերի 1-ին չեղյալ է համարվել:

Ներկայում ՎԶԵԲ-ի կողմից տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվում է վերոհիշյալ մրցույթի չկայացման պատճառների վերհանման ուսումնասիրություն, ինչպես նաև իրականացվում է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, որպեսզի սահմանվի նոր հայտարարվելիք մրցույթի ձևաչափը և չափորոշիչները:

Նկար 5. Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայր

Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված «հանրային-մասնավոր գործակցության շրջանակներում ԿԿԹ տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման հնարավորություն» միջոցառման իրականացումը կդիտարկվի նոր սանիտարական աղբավայրի կառուցումից հետո:

Երևանի քաղաքապետն անպատասխան է թողել Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված «Երևանի համար Թափոնների կառավարման տասնամյա ծրագրի մշակում» կարճաժամկետ միջոցառման վերաբերյալ հարցադրումը: Այս միջոցառման մասին տեղեկատվություն առկա չէ նաև 2017-2022 թվականների Երևանի զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվություններում:

- ✓ **«Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր**

2015թ. ՀՀ կառավարությունը վարկային համաձայնագրեր է կնքել ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի հետ՝ իրականացնելու «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիրը»[35] [36]:

Ծրագրի իրականացման համար տրամադրվել է 8 միլիոն եվրո վարկ ԵՆԲ-ից, 8 միլիոն եվրո վարկ՝ ՎԶԵԲ-ից, 8 միլիոն եվրո դրամաշնորհ՝ ԵՄ-ից՝ Հարևանության ներդրումային գործիքի միջոցով, 2 միլիոն եվրո դրամաշնորհ՝ E5P հիմնադրամից:

«Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում նոր աղբավայրը չի կառուցվել: Արդյունքում Երևանը չունի սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայր և դեռ չի հասել Երևանի «Կանաչ քաղաք» գործողություններ ծրագրով սահմանված թիրախին: «1950-ական թվականներից սկսած Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում ավելի քան 30 հա մակերեսով տարածք օգտագործվում է որպես աղբավայր /Նուբարաշենի աղբավայր/: Տարածքը ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել

[35] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/yerevan-solid-waste-project.html
[36] https://www.eib.org/en/projects/pipelines/all/20150017

որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, այն չի համապատասխանում իր չափանիշներով միջազգային /կամ որևէ/ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին և հանդիսանում է բացառապես որպես աղբի կուտակման վայր»[37]:

Ծրագրի շրջանակներում փակվել է Աջափնյակի կենցաղային աղբավայրը:

Նշենք, որ Երևանի «Էրեբունի» անտառպետության 51 հա անտառային հողերը գտնվում են Նուբարաշենի կոշտ կենցաղային աղբավայրի հարևանությամբ: Այս անտառպետության տարածքից է 24.42 հեկտար անտառային հող տրամադրվել նոր աղբավայրի կառուցման համար: ՀՀ կառավարության կողմից 2007-ի օգոստոսի 30-ին ընդունված «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման 8.1 կետով օգտագործման տրամադրվող անտառային տարածքի դիմաց տնտեսվարողը պետք է առնվազն կրկնապատիկ անտառապատման աշխատանքներ իրականացնի:[38] ԷկոԼուրը Երևանի քաղաքապետարանին հարցրել է, թե որ տարածքներն են տրամադրել անտառապատման համար «Էրեբունի» անտառպետության 24.42 հեկտարի փոխարեն: Այս հարցը մնացել է անպատասխան:

- ✓ **«Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագիր**

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագիրը: Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական միության միջև 2019թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված NEAR-TS/2019/412-943 դրամաշնորհային պայմանագրով սույն ծրագրով նախատեսվում է, սերտորեն համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ, ուժեղացնել վտանգավոր թափոնների կառավարումը քաղաքային կառավարման մակարդակում քաղաքից քաղաք համագործակցության, քաղաքացիների առավել ակտիվ մասնակցության, ինչպես նաև լավագույն փորձը գործնականի վերածելու միջոցով: Ծրագրի տևողությունը 48 ամիս է, ընդհանուր արժեք՝ 5 326 377,00 եվրո, ԵՄ ներդրումը՝ 4 793 739 եվրո, Երևանի քաղաքապետարանի ներդրումը՝ 366 369,60 եվրո, Վարշավայի քաղաքապետարանինը՝ 106 303,00 եվրո, Տիրանայի քաղաքապետարանինը՝ 81 465,10 եվրո Ենթադրամաշնորհներ՝ 8 500,00 եվրո[39]:

Ծրագրի իրականացման արդյունքների մասին տեղեկատվության բաց հարթակում տեղեկատվություն չենք գտել:

---

[37] https://sudipyerevan.am/%D5%A9%D5%A1%D6%83%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/

[38] https://www.ecolur.org/hy/news/forest/--59--/10185/

[39] https://www.yerevan.am/hy/development-and-investment-programs/

Թափոնների տեսակավորում

Երևանի քաղաքապետարանն աղբի տեսակավորում սկսել է իրականացնել 2021թ-ից «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջոցով:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի թափոնների տեսակավորման վարչությունը 2021-2022թթ. հավաքել և վերամշակողներին է հանձնել ընդհանուր քաշով 1.350 տոննա թափոն (պլաստիկ, թուղթ և ապակի)՝ ապահովելով 823,5 կգ CO_2 արտանետումների կրճատում: 2023թ. գարնանը ՀՈԱԿ-ը նախատեսվում է ալյումինե թափոնների համար թափոնամանների տեղադրում:

2021 և 2022 թվականներին իրականացված թափոնների տեսակավորման արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2022թ. տեսակավորված թափոնների թիվը, բացառությամբ սպիտակ թղթի, մյուս թափոնների դեպքում ավելացել է:

2021թ.	2022թ.
Ստվարաթուղթ - 321140կգ	Ստվարաթուղթ - 580000կգ
սպիտակ թուղթ - մոտ 500կգ	Սպիտակ թուղթ-220 կգ
Պլաստիկ - 16050կգ	Պլաստիկ-37000կգ
Ապակի - 30730կգ	Ապակի-48000կգ
Ընդհանուր՝ 368420կգ թափոն	Ընդհանուր՝ 665220 կգ թափոն

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի և «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ի հետ համատեղ Երևանի շուրջ 50 դպրոցներում տեղադրված պլաստիկ և թղթի թափոնների 200 տեսակավորման արկղերում 2021թ. հավաքվել է շուրջ 3800 կգ թափոն, որից թուղթ՝ մոտ 2900 կգ, պլաստիկ՝ մոտ 900 կգ: 2022թ. ձեռք են բերվել թափոնների տեսակավորման 150 զույգ ստվարաթղթե արկղեր, որոնք տեղադրվել են շուրջ 112 դպրոցներում:

Թափոնների տեսակավորման այս գործընթացը Երևանում կրում է մասնակի բնույթ:

Երևանը չունի աղբի վերամշակման գործարան:

2017-2022թթ. Երևանի զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվություններում առկա չէ տեղեկատվություն աղբի տեսակավորման և վերամշակման ինտեգրված համակարգի, գոյացած և տնօրինված ՔԿԿԹ-ների՝ հանրությանը մատչելի տվյալների շտեմարանի, Իրազեկման կենտրոնի ստեղծված լինելու մասին:

Եզրակացություն

Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված ԵՄ չափորոշիչներին համապատասխան նոր սանիտարական աղբավայր մայաքաղաքը դեռ չունի, ինչպես նաև չունի աղբի վերամշակման գործարան:

Չնայած նրան, որ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել է միջոցառումներ թափոնների տեսակավորման և վերամշակման ուղղությամբ: Երևան քաղաքում 120 տեսակավորման թափոնամաններ են տեղադրված բոլոր վարչական շրջաններում, որոնց հասցեները կարելի է գտնել օնլայն քարտեզում[40]: Երևան քաղաքի դպրոցներում տեղադրված են թղթի և պլաստիկի տեսակավորման թափոնամաններ: Այս միջոցառումները համալիր չեն և չեն ընդգրկում ողջ Երևանի տարածքը:

Երևանում սկսել է ձևավորվել թափոնների տեսակավորման մշակույթ:

2017-2022թթ. Երևանի զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվություններում առկա չէ տեղեկատվություն Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով սահմանված միջնաժամկետ թիրախներին հասնելու միջոցառումների՝ աղբի տեսակավորման և վերամշակման ինտեգրված համակարգի, գոյացած և տնօրինված ՔԿԿԹ-ների՝ հանրությանը մատչելի տվյալների շտեմարանի, Իրազեկման կենտրոնի ստեղծված լինելու, Թափոնների կառավարման տասնամյա ծրագրի մշակված լինելու մասին:

- ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ – «ՏՐԱՆՍՊՈՐՏ» ԲԱՂԱԴՐԻՉ

Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի միջնաժամկետ թիրախ (2025թ.)

- Ներդրված կլինի հասարակական տրանսպորտի ինտեգրված համակարգ, որը կապահովի սակագների ընտրության բազմազանություն: Սա իր հերթին կխթանի հասարակական տրանսպորտի ավելի լայն կիրառումը:
- ԵՔ-ը տրանսպորտի օգտատերերին կտրամադրի քաղաքի շարժունության հավելված (հնարավոր է, որ այս հավելվածն ինտեգրված լինի քաղաքի ավելի ընդարձակ հավելվածին), և ներդրված կլինի տվյալների բաց հարթակ, որը, համաձայն այլ քաղաքների լավագույն փորձի, կներառի քաղաքին առնչվող հիմնական տվյալների հավաքակազմը:
- Ներդրված կլինեն հասարակական տրանսպորտի համար սահմանված հատուկ երթևեկության գոտիներ: Հիմնվելով Փարիզի կամ այլ գործընկեր քաղաքների հետ համագործակցության և տրանսպորտի մոդելի օպտիմալացման մոդելավորման արդյունքների վրա՝ կսահմանվի հստակ թիրախ:
- Հասարակական տրանսպորտից կանոնավոր օգտվում է աշխատանքի գնացողների 65%-ը:

[40] https://greenyerevan.am/%d6%84%d5%a1%d6%80%d5%bf%d5%a5%d5%a6/

- Հասարակական տրանսպորտի 70%-ը կաշխատի այլընտրանքային վառելիքով՝ ՍԲԳ, էլեկտրականություն և ջրածին:
- Հասարակական տրանսպորտի 20%-ը կաշխատի էլեկտրականությամբ և ջրածնով՝ ներառյալ էլեկտրաբուսները: Էլեկտրաբուսների թիվը կարտացոլի տրանսպորտի օպտիմալացման ներուժը, ֆինանսական հնարավորությունները և առկա լիցքավորման ենթակառուցվածքները:
- Քաղաքը ներդրած կլինի ավտոմեքենաներից զերծ կենտրոնական գոտի և հատուկ կանոններ՝ այդ տարածքին ապրանքներ մատակարարելու համար:
- Տեխնիկական զննումները Երևանին տրամադրում են որակյալ տվյալներ ամբողջ շարժակազմի, այդ թվում՝ վերջինիս բնութագրերի վերաբերյալ: Այդ տվյալները սատարում են տրանսպորտային մոդելի շահագործմանը և Երևանի համար տրանսպորտին առնչվող հայեցակարգերի մշակմանը:
- Ելնելով օդի որակի ներկա վիճակից՝ ԵՔ-ը կմշակի հայեցակարգ, որով կսահմանափակվի հին փոխադրամիջոցների մուտքը քաղաքի որոշ հատվածներ:
- Քաղաքային մարդատար ավտոմեքենաների շարժակազմի 25%-ը կներկայացնեն էլեկտրամոբիլները:
- Կներդրվեն մի շարք հանրային լիցքավորման կայաններ: Հիմնվելով Փարիզի կամ այլ գործընկեր քաղաքների հետ համագործակցության և տրանսպորտի մոդելի մոդելավորման արդյունքների վրա՝ կսահմանվի հստակ թիրախ:
- Երևանը 100,000 բնակչի հաշվով կունենա 35 կմ հեծանվագոտի:
- Երևանը կհաստատի երկարաժամկետ համագործակցություն տեղական համալսարանների հետ: Տարին մեկ անգամ ԵՔ-ը և մասնակցող համալսարանները կկազմեն այն առարկաների տարեկան պլանը հաջորդ տարվա համար, որոնք ուսանողները պետք է ուսումնասիրեն որպես իրենց ուսումնական ծրագրի մաս: Պլանը սահմանում է ակնկալվող արդյունքների տեսակները:
- Կներդրվի տեղական համալսարանների հետ համատեղ մշակված տրանսպորտային մոդելը, որը կօգտագործվի քաղաքի կողմից ռազմավարական և գործառնական պլանավորման ընթացքում:
- Երևանը երկարաժամկետ համագործակցություն կհաստատի ԵՄ որևէ համադրելի քաղաքի հետ, որը հաղթահարում է իր հասարակական տրանսպորտը «կանաչեցնելու» նույն հիմնահարցերը:

Տրանսպորտի ներկա վիճակը

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համաձայն՝ Երևանում գործում է 34 միկրոավտոբուսային երթուղի, որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 430 միավոր շարժակազմով: Օրական միջին հաշվով երթուղիներ է դուրս բերվում 320-330 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 17 մասնավոր կազմակերպություններ և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն: Մայրաքաղաքի ուղևորափոխադրումներում միկրոավտոբուսներին բաժին է ընկնում ընդհանուր ծավալի մոտ 30.2%-ը: Բացառությամբ երկու «ՖԻԱՏ» մակնիշի

միկրոավտոբուսների, մնացած բոլորը «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ են, միջին տարիքը կազմում է մոտ 12.0 տարի: Միկրոավտոբուսների զգալի մասը չեն բավարարում կանոնավոր ուղևորափոխադրումների և ուղևորների սպասարկման որակին ներկայացվող պահանջներին: Սահմանված կարգի համաձայն՝ 15 տարին լրացած միկրոավտոբուսները ենթակա են պարտադիր փոխարինման, և այդ տեսանկյունից մինչև 2022թ. ավարտը դադարեցվել է 2007թ. թողարկման 25 միկրոավտոբուսների շահագործումը: Նախատեսվում է նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով:

Երևանի քաղաքապետարանի կայքի համաձայն՝Երևանում ավտոբուսային հավաքակազմում առկա է 699 ավտոբուս, փաստացի շահագործվում է 45 երթուղի, որոնցում օրական միջին հաշվով գիծ է դուրս բերվում 420-430 միավոր շարժակազմ: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն և մասնավոր 14 կազմակերպություններ:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 41 տրոլեյբուս, այդ թվում՝ 7 հատ «Շկոդա» և 34 «ԼԻԱԶ» մակնիշների: Ընկերությունը փաստացի սպասարկում է տրոլեյբուսային 5 երթուղի, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 32-35 միավոր շարժակազմ: 2022 թվականին ձեռք է բերվել և առաջիկայում մայրաքաղաք կներկրվի «Yutong» մակնիշի նոր, թվով 15 տրոլեյբուս (տրոլեյբուսային հավաքակազմի համալրման աշխատանքները կշարունակվեն նաև 2023 թվականին, նախատեսվում է ձեռք բերել ևս 15 նոր տրոլեյբուս):

Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան, գծի երկարությունը 12.1 կմ է, առկա է 45 վագոն: Կազմակերպվել է Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նպատակով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացը, որում հաղթող է ճանաչվել «Մետրոգիպրոտրանս» ընկերությունը, որն արդեն սկսել է համապատասխան աշխատանքները:

Տրանսպորտի սակագինը մեկ ուղղությամբ 100 դրամ է:

«ԵՄ կլիմայի համար» ԵՄ-ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում պատրաստված «Երևան քաղաքի տրանսպորտային համակարգի բարեփոխումները ցածր ածխածնային զարգացման քաղաքականության համատեքստում» զեկույցի համաձայն՝ 2017թ. Երևան քաղաքում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքները ցույց են տվել, որ բնակչության շրջանում Երևանի տրանսպորտի դժգոհության ինդեքսը բավականին բարձր է եղել՝ հատկապես միկրոավտոբուսների մասով, որոնց բաժին է ընկնում ուղևորահոսքի շուրջ 55 տոկոսը: Համաձայն հարցման արդյունքների՝ միկրոավտոբուսների մասով ուղևորների շրջանում հատկապես բարձր է եղել դժգոհությունը՝ պիկ ժամերին տեղերի առկայությունից (դժգոհության ինդեքսը կազմել է 83 տոկոս), երեկոյան ժամերին հասանելիությունից (74 տոկոս), վարորդների վարքագծից (67-71 տոկոս), տրանսպորտային միջոցների արտաքին տեսքից և մաքրությունից (68 տոկոս):

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի համաձայն՝ Երևանում առկա է ավտոկայանատեղերի խնդիր: Երևան քաղաքում հանրային (փողոցային) ավտոկայանատեղերի վճարը մեկ ժամի համար կազմում է 100 դրամ: Միաժամանակ, մեքենաների սեփականատերերը, ընդամենը վճարելով 2000 դրամ, կարող են մեկ ամիս անվճար օգտվել հանրային (փողոցային) ավտոկայանատեղերից, իսկ 12000 դրամ վճարելու դեպքում ամբողջ տարվա ընթացքում օգտվել այդ ծառայությունից: «Ըստ էության, կարելի է ասել, որ Երևան քաղաքում հանրային (փողոցային) ավտոկայանատեղերի վճարների քաղաքականությունը միայն ֆիսկալ նպատակներ է հետապնդում՝ այդ վճարները դիտելով ընդամենը որպես Երևան քաղաքի բյուջեի համալրման աղբյուր և քիչ կարևորելով նման վճարների կարգավորիչ դերը»,- նշված է Ծրագրում: Նախատեսվում է առաջիկայում Երևանում ներդնել հանրային (փողոցային) ավտոկայանատեղերի վճարների նոր քաղաքականություն, որն ուղղված կլինի տրանսպորտային հոսքերի արդյունավետ կառավարմանը՝ նպատակ ունենալով հատկապես բեռնաթափել մայրաքաղաքի Կենտրոն և հարակից վարչական շրջանները: Նոր քաղաքականության ներդրումն իրականացվելու է հանրային տրանսպորտի արդիականացման հիմնական փուլի ավարտից հետո:[41]

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ին 2022թ. դեկտեմբերի 14-ին նամակով Երևանի քաղաքապետարանից խնդրել է տեղեկատվություն տրամադրել Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված կարճաժամկետ միջոցառումների մասին: **Երևանի քաղաքապետարանի լրատվության վարչությունը 2022թ. դեկտեմբերի 22-ի № Հ/866 պատասխան նամակով (տե՛ս Հավելված 1) «Տրանսպորտ» բաղադրիչի վերաբերյալ հայտնել է,** որ մայրաքաղաքի երթևեկությունը տրանսպորտային հոսքերից բեռնաթափելու նպատակով քաղաքապետարանը Երևանը շրջանցող ճանապարհների կառուցման մի շարք ծրագրեր է իրականացնում: Միաժամանակ, նոր տրանսպորտային ցանցի ներդնման և բարեփոխման շրջանակներում ձեռք բերվող նոր ավտոբուսներն աշխատում են հեղուկ գազով՝ նվազեցնելով շրջակա միջավայրին հասցված վնասը, ինչպես նաև ավելացվում են էլեկտրական հասարակական տրանսպորտային միջոցները, ստեղծվում են էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման ենթակառուցվածքները:...

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում ձեռք են բերվել և մայրաքաղաք ներկրվել 211 հատ նոր, միջին դասի չինական «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի ավտոբուսներ, որոնք աշխատում են բնական սեղմած գազով: Բոլոր 211 ավտոբուսները ներկայում շահագործվում են Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներում՝ հիմնականում փոխարինելով «Գազել» մակնիշի հին միկրոավտոբուսներին:

Առաջիկայում մայրաքաղաք կներկրվի վերը նշված, «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի ևս 150 ավտոբուս, «ՄԱՆ» մակնիշի մեծ դասի (12 մետր երկարությամբ), բնական սեղմած գազով աշխատող 87 հատ նոր ավտոբուս, ինչպես նաև 30 հատ նոր տրոլեյբուս, ինչը

[41] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2022/398_1.pdf

հնարավորություն կտա զգալիորեն թարմացնել հասակական տրանսպորտի պարկը և բարելավել դրա աշխատանքը, մասնավորապես, արտանետումների նվազեցման և բնապահպանման խնդիրների տեսանկյունից: Վերը նշված գործողությունների արդյունքում, հաշվի առնելով ներկրվելիք ավտոբուսների և տրոլեյբուսների քանակը, քաղաքային տրանսպորտի շարժակազմը կթարմանա շուրջ 45 տոկոսով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը մշակել է Երևանի հանրային տրանսպորտի նոր արդյունավետ երթուղային ցանց, ինչը ենթադրում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորություն, զեղչային համակարգի կիրառում, նոր ժամանակակից շարժակազմերի (ավտոբուս, տրոլեյբուս) ձեռքբերում:

- ✓ **«Երևան ավտոբուս նախագիծ» ծրագիր**

ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաք II» (GrCF2 W2) ծրագրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանն 2021թ-ից իրականացնում է «Երևան ավտոբուս նախագիծ»-ը, որի համար ՎԶԵԲ-ը տրամադրել է 20 միլիոն եվրո սուվերեն վարկ: Ծրագրի ընդհանուր արժեքը 25 միլիոն եվրո է[42]: Ծրագիրը համաֆինանսավորվում է Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերության կողմից 5 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհով: Վարկային միջոցներով ու դրամաշնորհով կֆինանսավորվի նոր, ժամանակակից, 12 մետր երկարությամբ, ցածր հատակով, սեղմված բնական գազով (ՍԲԳ) աշխատող 100 ավտոբուսների գնումը Երևան քաղաքի համար:

Նախատեսվում է, որ Ծրագրի արդյունքում կբարելավվի հանրային տրանսպորտի հուսալիությունը, անվտանգությունն ու արդյունավետությունը, իսկ ՍԲԳ տեխնոլոգիան կնվազեցնի քաղաքային տրանսպորտից առաջացող օդի աղտոտվածությունը, ինչը համահունչ է Բանկի «Կանաչ քաղաքներ» շրջանակին և 2017 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրին: Ծրագիրն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի և «Երևանի ավտոբուս» ընկերության կողմից: Ծրագիրը պետք է նպաստի տարեկան 2,939 տոննա ածխաթթու գազի արտանետումների կրճատմանը:

- ✓ **Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր[43]**

2010թ. մեկնարկել է «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի» փուլ I-ը: Ծրագրի իրականացման համար ՎԶԵԲ-ը և ԵՆԲ-ն հատկացրել էին 5-ական միլիոն եվրո պետական վարկեր, իսկ Եվրամիության հարևանության ներդրումային գործիքը՝ 5 միլիոն եվրո դրամաշնորհ: Ծրագրի փուլ I-ի աշխատանքներն ուղղված են եղել Երևանի

[42] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/51749.html
[43] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/yerevan-metro-rehabilitation-project-phase-iii.html

մետրոպոլիտենի անվտանգության, էներգահամակարգերի կայունության ու արդյունավետության բարելավմանը: Փոխարինվել են մետրոպոլիտենի 30 գլխամասային վագոնների ամբողջովին մաշված անվասայլակները՝ 60 հատ, գնվել են տեխնիկական գնացքներ, մոնտաժվել է 34,6 կմ նոր մալուխ, ամբողջովին վերականգնվել են մետրոպոլիտենի պոմպակայանները (փոխարինվել են 76 պոմպ՝ հարակից սարք-սարքավորումների հետ միասին), փոխարինվել են մաշված ուղեգծի տարրերի որոշ կարևոր բաղադրիչներ: Միևնույն ժամանակ խնայողությունների հաշվին հնարավոր է եղել վերանորոգել և արդիականացնել մետրոպոլիտենի գլխամասային 8 վագոն:

2012թ. **Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի II փուլի շրջանակներում** ՎԶԵԲ-ը, ԵՆԲ-ը հատկացրել են 5-ական միլիոն եվրո պետական վարկեր, իսկ Եվրամիության հարևանության ներդրումային գործիքը՝ 5 միլիոն եվրո դրամաշնորհ: Փուլ II-ում վերանորոգվել և արդիականացվել է մետրոպոլիտենի գլխամասային 12 վագոն, հիմնվել է մեքենավարների ուսուցման կենտրոնը, ձեռք են բերվել բազմաթիվ հակահրդեհային տարատեսակ սարքավորումներ, գնվել և մոնտաժվել է վագոնների լվացման կայան:

Նշենք, որ 2022թ. նոյեմբերին, մամուլում լույս տեսած հրապարակման համաձայն՝ լուծարվել է Երևանի մետրոպոլիտենի հրշեջ ծառայությունը, կրճատվել են ծառայության 4 աշխատակիցները: Ըստ հրապարակման՝ պատճառն այն է, որ մետրոյում հրդեհ չի լինում[44]:

Փուլ II-ի հիմնական և ամենամեծ բաղադրիչի «Դրենաժային թունելի երկարացումը և մետրոպոլիտենի վազորդային թունելներում վերականգնողական աշխատանքների» իրականացման համար 2015թ. ապրիլի 27-ին Երևանի մետրոպոլիտենի և «Ազազոս» ՍԼ-ի միջև կնքվել է 10. 252 300,4 /առանց ԱԱՀ/ 12 302 760,4 /ԱԱՀ-ով/ արժողությամբ պայմանագիր: Նախատեսված է եղել Մետրոպոլիտենի ցամաքուրդային թունելի երկարացում 930 մ-ով՝ հասցնելով «Հանրապետության հրապարակ» կայարանի պոմպակայանին հարակից տարածք, մետրոպոլիտենի վազորդային թունելների ամրակապի հետևում գտնվող դատարկությունների լցոնում, հակակոռոզիոն աշխատանքներ և ամրակապի դետալների մատակարարում: Ըստ Երևանի քաղաքապետարանի կայքի՝ պայմանագրով տվյալ աշխատանքները պետք է ավարտվեին 2017թ. օգոստոսի 19-ին, սակայն նշված օրվա դրությամբ չավարտելու հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման համար «Ազազոսը» վճարում է տույժ-տուգանք (պայմանագրային գումարի 10%-ի չափով)՝ հօգուտ Մետրոպոլիտենի: Հորատանցման աշխատանքները ավարտվել են 2021թ. դեկտեմբերին (ընդհանուր առմամբ հորատանցվել է շուրջ 930 մետր): Մետրոպոլիտենի թունելներում կատարվել են մոտ 10.000 քառակուսի մետր հակակոռոզիոն աշխատանքներ, թունելի երեսարկի դատարկությունների լցոնման աշխատանքներ, սակայն դեռևս պետք է

[44] https://www.aravot.am/2022/11/24/1306823/

իրականացվեն ցամաքուրդային որոշակի միջոցառումներ։Վերոնշյալ բաղադրիչն ակնկալվում է ավարտել 2023թ. կեսերին[45]։

Երևանի մետրոպոլիտենը 2015թ-ին դիմել է ՎԶԵԲ-ին «Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի» փուլ III -ի իրականացման համար 7 միլիոն եվրոյի վարկ ստանալու ակնկալիքով: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվել է 22,5 միլիոն եվրո:

Ծրագիրը նախատեսել է շարժակազմի արդիականացում, շարժակազմի տեխնիկական սպասարկման դեպոյի վերանորոգում, էլեկտրական ենթակայանների, հոսանքի մալուխների և օդափոխման համակարգերի վերակառուցում, ռելսուղիների սպասարկում, ինչպես նաև մետրոյի կայարաններում նոր շարժասանդուղքների տեղադրում: Սակայն փուլ III -ը չի ֆինանսավորվել:[46] Երևանի քաղաքապետարանի համաձայն՝ մի շարք խնդիրներ ամբողջությամբ կամ մասամբ լուծվել են 2021-2022թթ. ընթացքում առանց նոր վարկի ներգրավման:

Որպես բնապահպանապես մաքուր տրանսպորտային միջոց Երևանում էլեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու 27.12.2022թ. հ.689-Ն որոշմամբ որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) վարորդների համար սահմանվել է ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2021 թվականի դեկտեմբերի 10-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության մշակած «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը, համաձայն որի՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (մեծ, միջին և փոքր ավտոբուսներ, մարդատար տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլներ և մոպեդներ) ներմուծման և (կամ) օտարման մասով ավելացված արժեքի հարկի արտոնության ժամկետը երկարաձգվել է մինչև 2024 թվականի հունվարի 1-ը:

2022 թվականի մարտի 17-ին 2022 թվականի համար 7.000, իսկ 2023 թվականի համար 8.000 էլեկտրամոբիլների՝ ՀՀ տարածք ներմուծման համար սահմանվել է զրոյական մաքսատուրք: Արտոնությունը տարածվում է նաև 2022թ. հունվարի 1-ից հետո ներմուծված էլեկտրամոբիլների վրա[47]:

Հայաստան ներկրված էլեկտրական տրանսպորտային միջոցների քանակ

2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.-ի 3-րդ եռամսյակ

[45] https://www.yerevan.am/hy/metro/
[46] https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/yerevan-metro-rehabilitation-project-phase-iii.html
[47] http://www.mnp.am/news/electric-vehicles-18-11-2022

668	2.155	6.645	8.098

Հայաստան ներկրված էլեկտրամոբիլների քանակ

2019թ.	2020թ.	2021թ.	2022թ-ի 3-րդ եռամսյակ
145	258	1.898	2.323

Ճանապարհաշինություն

- ✓ **Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր**

ՀՀ կառավարությունը 112,970,000 ԱՄՆ դոլար փոխառություն է ստացել Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Տրանշ 2-ի ֆինանսավորման համար: Ծրագիրը մեկնարկել է 2016թ-ի մարտի 4-ին և համաձայն վարկային համաձայնագրի՝ ավարտվելու է 2020թ. մարտի 30-ին: Ծրագիր 2-ը կկենտրոնանա քաղաքային տրանսպորտի բարելավման վրա Երևանում, համաձայն Երևան քաղաքի 2006թ.-ի քաղաքային զարգացման գլխավոր հատակագծի, և նպատակն է խթանել կայուն, ինտեգրված, սոցիալապես հասանելի ու ծախսերի տեսանկյունից արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը Հայաստանում[48]:

Ծրագիր 2-ով նախատեսվում է լրացնել քաղաքային արևմտյան օղակի բացակայող ճանապարհային հանգույցները: Ճանապարհային երեք ենթածրագրերը կօգնեն բեռնաթափել քաղաքի կենտրոնը տրանսպորտային միջոցներից:

Ենթածրագիր 1. Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույց

Ենթածրագիր 2. Դավթաշեն-Աշտարակ ճանապարհային հանգույց

Ենթածրագիր 3. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհային հանգույց

Բաբաջանյան-Աշտարակ շինարարական աշխատանքներն ընթացքում են: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2023թ. 2-րդ եռամսյակում: Արգավանդ-Շիրակ և Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածները հանձնված են շահագործման:

[48] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2016/16_1192_15.pdf

Ծրագիր/Տրանշ	Հատված	Անվանումը	Երկարությունը
Ծրագիր 1 /Տրանշ1	Հ1	Արշակունյաց	1 280 մ
	Հ 2	Նոր Շիրակ	3 200 մ
	Հ 3	Արտաշատ	
	Հ 4	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք/ փոխհատում	
Ծրագիր 2 /Տրանշ2	Հ 5	Արգավանդ-Շիրակ	1 350 մ
	Հ 6	Բաբաջանյան-Տիչինա	2 220 մ
	Հ 7	Տիչինա-Հին Սիլիկյան	2 060 մ
	Հ 8	Հին Սիլիկյան-Աշտարակ մայրուղի	2 570 մ
	Հ 9	Դավթաշեն-Աշտարակ մայրուղի	2 240 մ

Եզրակացություն

Երևանում դեռևս չի գործում միասնական էլեկտրոնային տոմսային համակարգ: Սակայն քայլեր են արվում այս ուղղությամբ:

Երևանը ներկրում է նոր մեծ ավտոբուսներ, ինչի արդյունքում քաղաքային տրանսպորտի շարժակազմը կթարմանա շուրջ 45 տոկոսով: Սակայն Երևանում դեռևս շարունակում են գործել միկրոավտոբուսներ, որոնք ծանրաբեռնում են երթևեկությունը: Երևանի քաղաքապետարանը մտադիր է աստիճանաբար շահագործումից հանել դրանք՝ փոխարինելով ավելի հարմարավետ տրանսպորտով:

Քայլեր են ձեռնարկվում էլեկտրոնային տրանսպորտի զարգացման ուղղությամբ:

Չնայած իրականացվող միջոցառումներին՝ մայրաքաղաքում շարունակում է խնդիր մնալ ուղևորներով ծանրաբեռնված տրանսպորտը, առաջանում են խցանումներ: Պատճառներն են մեքենաների քանակը, ավտոկայանատեղիների բացակայությունը, ինչի պատճառով մեքենաները կայանվում են փողոցներում՝ առաջին գծում: Պետական հիմնարկները, հանրային կրթօջախները կենտրոնացված են մայրաքաղաքի կենտրոնական հատվածներում, ինչը ևս խցանումների է նպաստում, որն էլ իր հերթին ավելացնում է վառելիքի արտանետումները:

Հեծանիվների և էլեկտրական ինքնագլորների վարման համար չկան համապատասխան պայմաններ, վայրեր: Քաղաքացիները վարում են մայթերում և ծանրաբեռնված փողոցներում՝ առաջացնելով վթարային իրավիճակներ:

ԵՐԵՎԱՆԻ «ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի Երևանի ռազմավարական նպատակներից է 2022թ. համար բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով հասցնել 8,5 քմ-ից ավելի տարածքի, իսկ 2030թ-ի համար՝ 10 քմ-ից ավելի: Մինչդեռ Երևանի գլխավոր հատակագծով այդ մակերեսը սահմանվել էր 17 քմ:

Այս նպատակին հասնելու համար որպես կարճաժամկետ գործողություն, մասնավորապես, առաջարկվել է.

- մշակել և սկսել իրականացնել երկարաժամկետ կառուցապատման ծրագիր Երևանի բուսավերականգնման համար՝ ելնելով տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության արդյունքներից

- խրախուսման մեխանիզմների միջոցով շարունակել իրականացնել տեղական էկոհամակարգերը սատարող ծրագրեր (օրինակ՝ առաջարկել թաղամասերի կանաչեցման դրամաշնորհներ, ոռոգման նորարարական լուծումների համար ֆինանսական օժանդակություն և այլն)

- Երևանի համար պատրաստել GIS-ի վրա հիմնված բնապահպանական քարտեզ

- անտառների և կանաչ տարածքների վերականգնում

- իրականացնել աղտոտված տարածքի վերականգնման և հարմարություններով ապահովված հանրային կանաչ տարածքի փոխակերպման փորձնական նախագիծ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 14.12.2022թ. նամակով Երևանի քաղաքապետարանից տեղեկտավություն է խնդրել Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով նախատեսված կարճաժամկետ միջոցառումների կատարողականի վերաբերյալ: Ի պատասխան **Երևանի քաղաքապետարանի լրատվության վարչությունը 22.12.2022թ. N Հ/866 նամակով (տես Հավելված 1) հայտնել է, որ,** հաշվի առնելով Երևան քաղաքի բնակլիմայական պայմանները, կանաչապատվող տարածքներում տնկվում են կայուն, արժեքավոր, գեղազարդ և մշտադալար ծառատեսակներ, որոնք գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ ավելի կայուն են: …Ընդլայնվում և բարելավվում են քաղաքի բուֆերային կանաչ տարածքները (Ծիծեռնակաբերդի 8,5 հա համայնքային տարածքը, Սարալանջի շուրջ 12 հա տարածքը, Փարոսի բլուրը): …2017-2022թթ. ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքում հիմնվել է 1 հատ կանաչ տարածք:

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 13.02.2023թ. Երևանի կանաչապատման խնդիրների վերաբերյալ երկրորդ հարցումն է ուղարկել Երևանի քաղաքապետարան, որին ի պատասխան Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող Գայանե Ներսիսյանը №17/27878-23 նամակով (տե՛ս Հավելված 4) հայտնել է, որ մաքրվել են Երևանյան լճի ափամերձ տարածքներն աղբով պատված եղեգներից (10հա) և կենցաղային թափոններից (12000 խմ), տեղադրվել է աղբառրսիչ ճաղավանդակ՝ թափոնների մուտքը Երևանյան լիճ կանխարգելելու նպատակով: Ներկայում տարածքը բարեկարգվում և կանաչապատվում է:

Նախագծվել է Գետառի վրա ջրերի մաքրման կայան, որի կառուցումը կիրականացվի 2023թ.:

2023թ. նախատեսվում է Հրազդան գետի վրա տեղադրել ևս 2 աղբորսիչ հարմարանք:

2022թ. ընթացքում հիմնվել է Ծիծեռնակաբերդի բարձունքի 8,5 հա վրա անտառտնկարկ և Սարալանջում 6 հա տարածքում իրականացվել են անտառվերականգնման և հիմնման

աշխատանքներ։ 2023թ. իրականացվում է Եռաբլուրի 10 հա տարածքի անտառապատումը և Փարոսի բլրի կանաչ տարածքի վերականգնումը։

Ծիծեռնակաբերդի բարձունքում տնկվել է շուրջ 4300 ծառաթփատեսակ, իսկ Սարալանջում՝ 1650 ծառաթփատեսակ։ Նշված ծառաթփատեսակներն ունեն ֆունկցիոնալ նշանակություն և հանդիսանում են ուրբան անտառների հիմնման հիմնական ծառատեսակներ/թխկի, հացենի, գլեդիչիա, կերլեյթերիա, ռոբինիա կեղծակացի, դրախտածառ, վայրի պտղատուներ և այլն/։ Անտառապաշտպան գոտիներ ստեղծելու հեռանկարային համաքաղաքային նշանակության ծրագրերից են՝ Զրաշխարհի աջակողմյան լանջի անտառապաշտպանիչ գոտու, Սիլիկյանի անտառապաշտպան գոտու և Նուբարաշենի անտառապաշտպան գոտու ստեղծումը։ Սկսած 2021թ. բարեկարգվել և կանաչապատվել են Քանաքեռ ՀԷԿ-ի հարակից այգին, Նոր Արաբկիր /մոլոկանի/ զբոսայգին, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածը, Վերածննդի այգին, Սիրո և հավատի այգին, Սարյանի անվան պուրակը։ 2022թ. մեկնարկել է Խ. Աբովյանի անվան պուրակի և 40-ամյակի այգու բարեկարգման և կանաչապատման աշխատանքները։

Երևան քաղաքի ոռոգման ցանցի արդիականացման, ընդլայնում և վերակառուցում նպատակով գույքագրվել է Երևան քաղաքի ոռոգման ցանցը, այդ թվում նաև պոմպակայանները խորքային հորերը։ Մայրաքաղաքի ամբողջ ոռոգման համակարգի երկարությունը 321 կմ է, որից 90 կմ-ն է նորմալ վիճակում, իսկ մնացած մասը մաշված է կամ խցանված, կամ էլ վթարային է։ 2019-2020թթ. ժամանակահատվածում իրականացված ոռոգման ցանցի գույքագրման և վերլուծության արդյունքում 2021թ. Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում անցկացվել, փոխարինվել է շուրջ 22.6 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ և վերականգնվել է մոտ 8 կմ երկարությամբ խցանված ջրագիծ։ 2022թ. երկրորդ կիսամյակում վերանորոգվել և անցկացվել է շուրջ 18500 գծմ։ 2023թ. նախատեսվում է անցկացնել շուրջ 30000 գծմ։

Նշենք, որ ԷկոԼուրի հարցերի մի մասը մնացել է անպատասխան։

Երևանը տարիներ շարունակ չի կարողանում ավելացնել կանաչ տարածքները, որպեսզի հասնի Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակին՝ մեկ բնակչին բաժին ընկնող կանաչապատ տարածքը հասցնի 17 քմ-ի։ Դեռևս չի ստացվում մոտենալ անգամ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից սահմանված նվազագույն՝ կանաչ տարածքի սահմանաչափին՝ յուրաքանչյուր բնակչի համար 9 քմ-ի։

Ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում նշված տվյալները և «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը»՝ պարզ է դառնում, որ կանաչ տարածքները 2015թ-ից հետո չեն ավելացել։ Երկու աղբյուրում էլ նշված է, որ Երևանի կանաչ տարածքները պաշտոնապես մոտ 6760 հա են, ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 30%-ն է։ Սրա մեջ մտնում են հանրային, մասնավոր տարածքները և կանաչ բուսականության բոլոր տեսակի ծածկերը՝ ներառյալ ծաղկաթմբերը և սիզամարգերը։ Այս մակերեսից 860 հեկտարը հանրային կանաչ մակերեսն է։ Ներկայում ընդհանուր օգտագործման հանրային կանաչ մակերեսը, ըստ Երևանի

քաղաքապետարանի պաշտոնական կայքի՝ շուրջ 869 հա է: Տվյալների համեմատությունից ստացվում է, որ հանրային կանաչ տարածքները վերջին 5 տարում ավելացել են ընդամենը 9 հա-ով:

2017թ-ին ընդունված «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» համաձայն՝ մեկ մարդուն բաժին ընկնող կանաչ տարածքը 7,6 քմ է, իսկ քաղաքապետարանի պաշտոնական կայքում նշվում է շուրջ 8 քմ:

Կանաչ տարածքների փոփոխության դինամիկան Երևանում

1990թ. Երևանում մեկ շնչին բաժին է հասել 8,47 քմ կանաչ տարածք: «1990թ-ին Երևանի տարածքից մոտավորապես 1,930 հա (8,6%) ծածկված էր ծառերով: Ճգնաժամի տարիներին (1991-1995թթ.) մոտավորապես 470 հա (2,1%) մակերեսի ծառերը հատվեցին որպես վառելիք: 1995-2000թթ. շինարարական աշխատանքների հետևանքով ոչնչացվեց ևս 700 հա (3,1%) ծառապատ տարածք: Այսպիսով, 2000-ական թվականների սկզբին քաղաքում մնացել էր ընդամենը 760 հա (3,4%) անտառ: Այդ ժամանակվանից վիճակը կայունացել է, սակայն քաղաքաշինության ընթացքում դեռևս ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում ապօրինի ծառահատումներ»,- նշված է «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում:

Երևանի Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գլխավոր դենդրոլոգ Արծվի Գրիգորյանի (ելույթ է ունեցել 2022թ. նոյեմբերին Երևանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցած՝ Երևանում բարեկարգումների և կանաչ ֆոնդի պահպանության հարցերի վերաբերյալ քննարկման ժամանակ)՝ ամբողջ մայրաքաղաքում մեկ մարդուն բաժին է հասնում 7,5 քմ կանաչ տարածք, իսկ Կենտրոն վարչական շրջանի բնակիչներին՝ ընդամենը 3 քմ:

Երևանի գլխավոր դենդրոլոգի համաձայն՝ Երևան քաղաքի կանաչ տնկարկները երիտասարդացման, դենդրոֆոնդի փոխարինման կարիք ունեն: «Աստիճանաբար նախատեսում ենք առանձին փողոցներով հատկապես մանրատերև թեղիները փոխարինել ավելի գեղազարդ ծառատեսակներով: Հացենին, թխկին, թեղին հանելու ենք: Երևանում 60% դրանք են: Ծառերը փոխարինելու համար 200 միլիոն դրամի սահմաներում գնումներ ենք հայտարարել», - ասել է նա[49]:

Կենտրոն վարչական շրջանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն արձանագրել է փոշով և ազոտի երկօքսիդով մթնոլորտային օդի աղտոտվածության բարձր ցուցանիշներ:

Երևանի անտառների մասին

Փաստացի Երևանը կորցրել է իր անտառները: 2014թ. լուծարվել է Երևանի անտառտնտեսությունը: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարի 18.03.2014թ. հ.73-Ա հրամանով «Երևանի անտառտնտեսություն» մասնաճյուղը լուծարվել է, և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 18.03.2014թ. հ.73-Ա հրամանով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառուցվածքում ստեղծվել է

[49] https://www.ecolur.org/hy/news/cities/14496/

Երևանի անտառային հողերի կառավարման բաժին: Հետագայում, Երևանի անտառային հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 17.08.2016թ. N39 հրամանով վերը նշված բաժինը վերակազմավորվել է Երևանի անտառային հողերի կառավարման տեղամասի և միացել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ անտառային հողերը Երևան քաղաքում կազմում են 871 հա, որոնք ընդգրկված են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի» անտառտնտեսության «Էրեբունի» և «Երևան» անտառպետությունների կազմում:

Նկար 6. Կառուցապատվող Նորքի անտառի տարածքը

Եզրակացություն

Երևանի քաղաքապետարանը դեռ չի հասել «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով սահմանված թիրախին՝ մեկ բնակչի հաշվով կանաչ տարածքը փոքր է 2022թ-ի համար սահմանված թիրախից, որն է 8,5 քառ. մ-ից ավելի մեկ բնակչի համար: Երևանում մեկ շնչին ներկայում բաժին է ընկնում շուրջ 8 քառ. մ կանաչ տարածք, Իսկ Կենտրոն վարչական շրջանին՝ 3 քմ:

Երևանը կորցրել է իր կանաչ տարածքների զգալի մասը, այսօր չկան բավականաչափ ազատ տարածքներ լայնամասշտաբ անտառտնկումներ իրականացնելու համար: 2014թ. լուծարվել է Երևանի անտառտնտեսությունը: Անտառային հողերը կառուցապատվում են, մայրաքաղաքում անտառի վերականգնումը դառնում է անհնար:

Աղբյուրներ

1. Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր
2. Երևանի զարգացման 2017 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
3. Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
4. Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
5. Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
6. Երևանի զարգացման 2021 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
7. Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն
8. Երևանի զարգացման 2023 թվականի ծրագիր
9. Երևան քաղաքի Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիր
10. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիր
11. «ԵՄ կլիմայի համար» ԵՄ-ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում պատրաստված «Երևան քաղաքի տրանսպորտային համակարգի բարեփոխումները ցածր ածխածնային զարգացման քաղաքականության համատեքստում» զեկույց
12. ՎԶԵԲ-ի 2022թ. մարտի ««Կանաչ քաղաքներ» ծրագրի միջանկյալ գնահատում» փաստաթուղթ
13. Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր
14. ՀՀ կառավարության պաշտոնական կայք
15. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք
16. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք
17. Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք
18. Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի պաշտոնական կայք
19. Քաղաքային կայուն զարգացման ծրագրի կայք
20. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ
21. ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայք
22. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պաշտոնական կայք
23. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կանաչ քաղաք ծրագրի կայք
24. Եվրոպական ներդրումային բանկի պաշտոնական կայք
25. Հայաստանի Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի կայք
26. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կայք
27. «Առավոտ» օրաթերթի կայք
28. Առաջինի լրատվական կայք

Հավելված 1

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	**«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ** Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Երևանի քաղաքապետ
պարոն Հրաչյա Սարգսյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը:

Ելնելով Ծրագրի նպատակներից, համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն.

1. Որքա՞ն գումար է հատկացվել «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» մշակման համար՝ Չեխիայի կառավարության Պաշտոնական զարգացման աջակցության Տեխնիկական համագործակցության հիմնադրամի կողմից՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Կանաչ տնտեսության քաղաքականության» երկխոսության շրջանակի միջոցով:
2. Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով» նախատեսված կարճաժամկետ գործողություններից որո՞նք են իրականացվել, ի՞նչ ծավալով և որքա՞ն գումար է արդեն ծախսվել: Ստորև ներկայացված են այդ գործողությունները:

Ա. Շրջակա միջավայրի վիճակը Երևանում

- օդի որակի քաղաքականության և մեթոդաբանության, ինչպես նաև մշտադիտարկման համակարգի բարելավում
- «Կանաչ քաղաքի իրազեկման կենտրոն»-ի հիմնում

Բ. Տրանսպորտ

- ավտոբուսների նոր ցանցի մոդելի ներդնում և հասարակական տրանսպորտի արդիականացում՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ
- ճանապարհային ենթակառուցվածքների զարգացում
- մինչև 2020թ. վերջը՝ շարժակազմում 10 էլեկտրամոբիլի ներդնում:

Գ. Էներգամատակարարում

- համայնքային կառույցներում էներգետիկ կառավարման ներդնում և համայնքային էներգետիկայի կառավարիչների համար կարողությունների զարգացման իրականացում
- հանրային շենքերիներքին լուսավորության համակարգերում էներգաարդյունավետ լուսատուների օգտագործում
- բակային տարածքների և բազմաբնակարան շենքերի մուտքերի արտաքին լուսավորության սարքերի համար արևային ՖՎ վահանակների օգտագործում:

Դ. Արդյունաբերություն

- համայնքային-մասնավոր հատվածի երկխոսության հարթակի ստեղծումը և կանաչ բիզնեսի զարգացման գործողությունների ծրագրի մշակումը
- «Կանաչ» բիզնեսին ցուցաբերվող օժանդակության ներառումը պետգնումների ընթացակարգեր
- արդյունաբերության ոլորտի էներգաաուդիտների շուրջ կամավոր համաձայնությունների ձեռքբերումը՝ ընկերություններին շահագրգռելու նպատակով (օրինակ՝ փոքր դրամաշնորհների միջոցով):

Ե. Թափոնների կառավարում

- քաղաքային կոշտ թափոնների նոր սանիտարական աղբավայրի կառուցում
- Նուբարաշենի և Աջափնյակի գոյություն ունեցող աղբավայրերի փակում:

Զ. Ջուր

- Ջրամատակարար ընկերության կողմից ջրաչափերի տեղադրման մեկնարկ
- Արտահոսքերի կրճատման գործողությունների ծրագրի կազմում
- Կոնցեսիոն պայմանագիր ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և ջրամատակարար ընկերության միջև
- Ջրամատակարարման համակարգի ամենամեծ հոսակորուստներ ունեցող հատվածների նորոգում և վերականգնում
- Կոյուղու և անձրևաջրերի ջրատարների միացման հատվածների վերանորոգում:

Է. Հողօգտագործում

- ընտրված հանրային շենքերում կամ նրանց մերձակայքում կանաչ տրանսպորտի ենթակառուցվածքների ներդրում
- նոր շենքերում կանաչ տրանսպորտի ենթակառուցվածքների ներդրման և խոշոր վերանորոգումների համար կանոնների մշակում
- Երևանի բուսավերականգնման համար երկարաժամկետ կառուցապատման ծրագրի մշակում և իրականացում
- անտառների և կանաչ տարածքների վերականգնում
- Երևանի աղտոտված տարածքների հնարավորինս մանրամասն զույքագրում:

3. Երևանի քաղաքապետարանը ի՞նչ միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ է նախատեսում իրականացնել մինչև 2030թ-ը Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրով սահմանված տեսլականին հասնելու համար:
4. Ի՞նչ դժվարություններ և խոչընդոտներ են ի հայտ եկել կարճաժամկետ գործողությունների իրականացման փուլում:
5. Երևանի համար մշակված այս ծրագիրը ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» մոտեցման առաջին կիրառությունն է: Խնդրում ենք նշել, թե արդյոք այլ քաղաքներ օգտվել են Երևանի փորձից նման ծրագիր իրականացնելու հարցում:
6. Իրականացված միջոցառումների արդյունքում 2017-2022թթ. ինչքա՞ն էլեկտրաէներգիայի խնայողություն է ապահովվել Երևան քաղաքում և ինչքանո՞վ են կրճատվել մթնոլորտային օդ արտանետվող ջերմոցային գազերը, որքանո՞վ է նվազել մթնոլորտային օդի աղտոտվածության աստիճանը, Ծրագիրն ինչքանո՞վ է նպաստել ջրային ռեսուրսների աղտոտվածության կրճատմանը, քանի՞ հեկտար կանաչ տարածք է հիմնվել, ե՞րբ է նախատեսվում Նուբարաշենի և Աջափնյակի գոյություն ունեցող աղբավայրերի վերջնական փակումը և նոր աղբավայրի շահագործման մեկնարկը, քանի տոկոսով է նորացվել Երևանի ավտոշարժակազմը:

Հարգանքով՝
Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

14.12.2022թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1 **հեռ. +(374 11) 514-240**

№ Հ/866
22-12-2022

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ, կենսաբանական գիտությունների թեկնածու Ինգա Զարաֆյանին

Հարգելի տիկին Զարաֆյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ աշխատակազմի բնապահպանության վարչությունը կանաչապատ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման նպատակով ներկայումս իրականացնում է կանաչապատման լայնածավալ աշխատանքներ, առաջնահերթությունը տալով առավել խոցելի տարածքների կանաչապատմանը: Հաշվի առնելով Երևան քաղաքի բնակլիմայական պայմանները՝ կանաչապատվող տարածքներում տնկվում են կայուն, արժեքավոր, գեղազարդ և մշտադալար ծառատեսակներ, որոնք գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ ավելի կայուն են:

Ընդլայնվում և բարելավվում են քաղաքի բուֆերային կանաչ տարածքները (Ծիծեռնակաբերդի 8,5 հա համայնքային տարածքը, Սարալանջի շուրջ 12 հա տարածքը, Փարոսի բլուրը): 2023 թվականից աշխատակազմի բնապահպանության վարչությունը և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը նախատեսում են իրականացնել բարեփոխումներ Երևան քաղաքի փողոցային տնկարկներում՝ ծերացած և վնասատուներով վարակված ցածրարժեք ծառերի փոխարինում գեղազարդ, էկոլոգիապես կայուն ծառատեսակներով, որոնք կբարելավեն Երևան քաղաքի կանաչ տարածքների սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները:

Նշեմ նաև, որ մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման, ջրային ռեսուրսների աղտոտման, տրանսպորտային միջոցների ավելացման գործոնների ազդեցությամբ պայմանավորված ածխաթթու գազի նվազեցման նպատակով Երևանի քաղաքապետարանն իրականացնում է օդի աղտոտման առկա աղբյուրների պարբերական մշտադիտարկում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադրելով տնտեսվարող սուբյեկտներին ապահովել օդի աղտոտման նվազեցման սահմանված միջոցառումները (օրինակ՝ ապահովել շինարարական հրապարակների պատշաճ կահավորումը, սանիտարական մաքրումը, շինարարական հրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացումը՝ կանխելու դրանց կողմից փողոցների աղտոտումը):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մայրաքաղաքի երթևեկությունը տրանսպորտային հոսքերից

բեռնաթափելու նպատակով քաղաքապետարանը Երևանը շրջանցող ճանապարհների կառուցման մի շարք ծրագրեր է իրականացնում: Միաժամանակ, նոր տրանսպորտային ցանցի ներդնման և բարեփոխման շրջանակներում ձեռք բերվող նոր ավտոբուսները աշխատում են հեղուկ գազով՝ նվազեցնելով շրջակա միջավայրին հասցված վնասը, ինչպես նաև ավելացվում են էլեկտրական հասարակական տրանսպորտային միջոցները, ստեղծվում են էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման ենթակառուցվածքները:

«Երևանի կայուն քաղաքային տրանսպորտի ներդնում» ծրագրի շրջանակներում Ասիական Զարգացման Բանկի Հայաստանում մշտական առաքելության կողմից Երևանի քաղաքապետարանին են տրամադրվել օդի որակի մոնիթորինգի սենսորներ: Հետազոտությունը միտված է երթևեկության աղտոտիչների ուսումնասիրությանը, քաղաքային նոր տրանսպորտային ցանցի ներդնմամբ պայմանավորված օդի որակի փոփոխությունների բացահայտմանը: Օդի որակի մոնիթորինգի սենսորների տեղադրման հասցեները գտնվում են տրանսպորտի նոր երթուղիների վրա:

Օդի որակի մոնիթորինգի սենսորները աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից տեղադրվել են Երևան քաղաքում թվով 5 հասցեներում և իրականացնում են օդում ազոտի երկօքսիդի (NO2) և փոշու (PM2.5 և PM10) քանակությունների չափումներ: Սրանք համարվում են երթևեկության հիմնական աղտոտիչներ և տրանսպորտային համակարգում վառելիքի տեսակի (գազ, դիզել կամ բենզին) փոփոխության հետ մեկտեղ օդում դրանց քանակը էապես փոփոխվում է: Սենսորները սնվում են արևային վահանակների միջոցով և տեղեկատվությունը փոխանցվում է ավտոմատ եղանակով (յուրաքանչյուր 10 րոպեն մեկ), որն արտացոլվում է օնլայն հարթակի վրա: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ օդի որակի ցուցանիշները գտնվում են լավ կամ բավարար միջակայքում:

Քաղաքային տրանսպորտի ոլորտում իրականացված գործողությունների վերաբերյալ.

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում ձեռք է բե
211 հատ նոր, միջին դասի չինական «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի ավտոբուսներ, որոնք աշխատում են բնական
սեղմած գազով:

Բոլոր
211 ավտոբուսները ներկայումս շահագործվում են Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների
«Գազել» մակնիշի հին միկրոավտոբուսներին:

Առաջիկայում մայրաքաղաք կներկրվի վերը նշված, «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի և 150 ավտոբուս,
«ՄԱՆ» մակնիշի մեծ դասի (12 մետր երկայությամբ), բնական սեղմած գազով աշխատող
87 հատ նոր ավտոբուս, ինչպես նաև
30 հատ նոր տրոլեյբուս, ինչը հնարավորություն կտա զգալիորեն թարմացնել հասակական տրանսպորտի պարկը և բ
45 տոկոսով:

Վարչական շրջանների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակային տարածքների
բարեկարգման աշխատանքներ իրականացնելիս տեղադրվում են լեդ լուսատուներ: Վարչական շրջանի մի շարք բազ

Աջափնյակ վարչական շրջանում՝ վարչական շենքի լուսավորության համակարգում, տեղադրվել են էներգաարդյունաա
6 բազմաբնակարան շենքերի բակային տարածքների, մուտքերի և վերելակների էլեկտրասնուցումը միացվել է արևայ

Երեբունի վարչական շրջանի վարչական շենքի լուսավորության համակարգում տեղադրվել են էներգաարդյունավետ լ
/հարակից շենքեր/ կառուցվել է ջրագծի նոր մագիստրալ։ Խ.Դոնի փող. հ.19 շենք՝ նոր կոյուղագծի կառուցում։

Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 6-րդ փ. հ.
1/2 բազմաբնակարան շենքի տանիքում տեղադրվել են արևային ՖՎ վահանակներ։

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի աշխատասենյակների լամպերը փոխար

Վարչական շրջանի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացման ժամանակ բակերում տ

Մի շարք բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրվել են ֆոտովոլտային վահանակներ ներշենքային և բակա
Ն. Շենգավիթ և Նորագավիթ թաղամասերի կոյուղի չունեցող փողոցներում կառուցվել են կոյուղագծեր, Ֆրունզե փողոց

Անտառների և կանաչ տարածքների վերականգնման նպատակով կատարվում են խորքային հորի կառուցման աշխա

2017-2022թթ. ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքում հիմնվել է 1 հատ կանաչ տարածք։

Աշխատակազմի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության կողմից տեղեկացնում են հետևյալը.

Երևանի քաղաքապետարանը 2021թ-ից գործնական հարթություն է տեղափոխել Երևան համայնքում էներգետիկ կառավարման համակարգ (այսուհետ՝ Համակարգ) ներդնելու աշխատանքները: 2021թ. փետրվարի 26-ին Երևան համայնքի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի միջև ստորագրվել է մտադրությունների մասին հուշագիր, որի շրջանակներում կողմերը, որպես ընդհանուր նպատակ, ընդունել են Համակարգի կայացման անհրաժեշտությունը Երևան համայնքում:

Երևանի քաղաքապետը 2022թ. ապրիլի 5-ին ընդունել է «Երևան համայնքի էներգետիկ կառավարումը համակարգող աշխատանքային խումբ ստեղծելու, խմբի կազմն ու աշխատակարգը հաստատելու և էներգետիկ կառավարչի պարտականություններն իրականացնելու մասին N 1266-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում): Համաձայն Որոշման՝ Համակարգի ներդրման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Համակարգող խումբ)՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի ղեկավարությամբ, նշանակվել է էներգետիկ կառավարիչ, ձևավորվել են անհրաժեշտ իրավական և աշխատանքային կառուցակարգերը և տրվել համապատասխան հանձնարարականներ:

Համակարգող խմբի 1-ին նիստով հաստատվել են Երևան համայնքի ենթակայության շուրջ 320 ընկերությունների/կազմակերպությունների ցանկը, որոնցում մեկնարկել է էներգետիկ կառավարման համակարգի ներդրման գործընթացը: Ցանկում ներառված են համայնքային 161 մանկապարտեզները, 30 առողջապահական հիմնարկներ, 19 գրադարաններ, 26 երաժշտական և արվեստի դպրոցները, 13 մանկապատանեկան և մշակութային կենտրոնները, 10 թանգարաններն ու թատրոնները, 34 մարզադպրոցները, Երևանի քաղաքապետարանի 2 և 12 վարչական շրջանների վարչական շենքերը և 14 այլ ՓԲԸ-ներ ու ՀՈԱԿ-ներ:

Նշված 320 ընկերություններում/կազմակերպություններում տնօրենների հրամաններով նշանակվել են էներգետիկ պատասխանատուներ, որոնց կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով 2022թ. հունիսի 6-ից 10-ը և հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը անցկացվել են վերապատրաստման դասընթացներ:

Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտի 1 հասցեում գտնվող վարչական շենքում 2018-2021թթ. 2300 հատ լյումինեսենտային և 250 հատ շիկացման լամպերը/լուսատուները փոխարինվել են 2550 հատ LED լուսատուներով, Բյուզանդ 1/3 հասցեում՝ 2019-2021թթ. 1000 հատ լյումենիսենտային տեսակի լուսատուները փոխարինվել են 1000 հատ LED լուսատուներով:

2017թ. Երևան քաղաքի պատմության թանգարանի լուսատուներն ամբողջությամբ փոխարինվել է 380 հատ LED լուսատուներով:

Միևնույն ժամանակ պարբերաբար իրականացվում են Երևանի ենթակայության հանրային շենքերի (մանկապարտեզների, մարզադպրոցների, առողջապահական հիմնարկների և այլն) վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների, որի շրջանակներում ներշենքային շիկացման և լյումենիսենտային լուսատուները փոխարինվում են LED լուսատուներով:

«Եվրոպական միությունը Երևանի համար. Արևային համայնք» ծրագիրն իր բովանդակային և սոցիալական ազդեցության մասշտաբներով առաջին և միակն է ինչպես Երևանում, այնպես էլ Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության անդամ հանդիսացող մյուս քաղաքների շարքում:

Այս համատեքստում արվել է ամեն ինչ՝ ծրագիրը լավագույնս իրականացնելու և քաղաքի վարկանիշը միջազգային հարթակներում բարձր մակարդակով ներկայացնելու նպատակով:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1.250.000 եվրո, որից 250.000 եվրոն համաֆինանսավորվել է Երևանի քաղաքապետարանի կողմից:

Ծրագիրը համահունչ է նաև Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» նպատակներին, քանի որ Ծրագրի իրականացման արդյունքում CO2 արտանետումները կնվազեն տարեկան ավելի քան 453 տոննայով:

Ծրագրի շրջանակում 97 բազմաբնակարան շենքերի բնակիչներ օգտվում են իրենց շենքերի ներշենքային և աստիճանավանդակային հատվածների և բակային տարածքների բարձրորակ լուսավորությունից, ինչպես նաև ունեն այդ տարածքներում էլեկտրաէներգիայի սպառման նվազում մոտ 77%-ով և վերելակների էլեկտրաէներգիայի վճարումների նվազում մոտ 50%-ով:

Տեղադրված արևային կայաններն ու լուսավորության համակարգերը նվիրաբերվել են բնակիչներին:

Շենքերից յուրաքանչյուրի համար ստեղծվել են նպատակային բանկային հաշիվներ, որտեղ կկուտակվեն բնակիչներից գանձված գումարները և Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին վաճառված էլեկտրաէներգիայից գոյացած եկամուտը: Իսկ կուտակված գումարը կուղղվի նվիրաբերված համակարգերի սպասարկմանը և բնակիչների որոշմամբ շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացմանը:

Ծրագրի սոցիալական բաղադրիչի շրջանակներում շուրջ 257 անապահով ընտանիքի տրամադրվել են 5-ական լուսադիոդային լամպեր:

Ծրագրի իրականացման արդյունքում նշված շենքերում ակնկալվում է տարեկան կտրվածքով՝

մոտ 933 ՄՎտ. ժամ էլեկտրաէներգիայի արտադրում արևային կայանների միջոցով

453 տոննա CO_2 գազի արտանետման նվազում

իսկ լուսավորության համակարգի փոխարինման արդյունքում կունենանք 395 ՄՎտ. ժամ էլեկտրաէներգիայի սպառման նվազում:

Շենքերի ընտրությունը կատարելիս հաշվի է առնվել նաև տարածքային համաչափ զարգացման սկզբունքը՝ ընդգրկելով բոլոր վարչական շրջանները:

Ծրագրի իրականացման արդյունքում բազմաբնակարան շենքերի շուրջ 27.000 բնակիչ կապրի ավելի հարմարավետ պայմաններում, իսկ մեր երեխաները կխաղան լուսավոր և անվտանգ բակերում:

Երևանի քաղաքապետարանի Արգիշտի 1 հասցեում գտնվող գլխավոր մասնաշենքի տանիքին տեղադրել են արևային ֆոտովոլտային կայաններ՝ մասնաշենքի էլեկտրական էներգիայի արտադրության և լուսավորությունը ապահովելու համար: Փոխակերպիչների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 150 կՎտ, արևային ֆոտովոլտային վահանակների ընդհանուր դրվածքային հզորությունը 156.96կՎտ: Քաղաքապետարանի 2-րդ՝ Բյուզանդ 1/3 հասցեում գտնվող մասնաշենքի տանիքին կտեղադրվեն արևային ֆոտովոլտային կայաններ, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կկազմի 153,69 կՎտ, իսկ ինվերտորների ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 150 կՎտ:

Արգիշտի 1 հասցեում գտնվող շենքի աշխատանքների իրականացման արդյունքում տարեկան CO_2 արտանետումները կկրճատվեն՝ 392,4 տոննա, տարեկան խնայողությունը կկազմի՝ 30 %: Բյուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի աշխատանքների իրականացման արդյունքում տարեկան CO_2 արտանետումները կկրճատվեն՝ 384,3 տոննա, տարեկան խնայողությունը կկազմի՝ 35 %:

Քաղաքի համար կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր ունենալը մեծ կարևորություն է ներկայացնում և կայուն զարգացման հիմքն է հանդիսանում: Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զգալի քայլեր է ձեռնարկել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և կլիմայի փոփոխության ազդեցության հարմարվողականության հատուկ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Հատկանշական է, որ այս տարի Երևանի զարգացման միասյա ծրագիրը համալրվել է նոր՝ «Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված ծրագրեր» բաժնով: Այս առումով 2023 թվականին նախատեսվում է շարունակել ակտիվ համագործակցությունը ՄԱԶԾ-ի և Եվրոպական միության հետ՝ կյանքի կոչելու մի շարք կարևոր ծրագրեր, որոնք ուղղված են Երևանի քաղաքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության բարելավման և շրջակա միջավայրի պահպանության երկարաժամկետ ռազմավարության իրականացմանը: Շարունակական կլինեն վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, հասարակական շենքերի ջերմամեկուսացման, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, տրանսպորտային համակարգի արդիականացման և խելացի լուծումների կիրառման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազեցնելու CO_2 արտանետումները:

Այս պահին ընթացքում է Երևանի կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարական ծրագրի մշակման գործընթացը:

«Երևան 2.0. Դեպի ավելի ընդգրկուն ու կանաչ վերականգնում» ծրագրի շրջանակում «Դոնաթ» նորարարական տնտեսական մոդելի տեղայնացմանն ուղղված աշխատանքների հիման վրա ստեղծվել է Երևան քաղաքի զարգացման դիմանկարը (Selfie City), Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բ-2 թաղամասում գտնվող այգում կառուցվել է բացօթյա դասարան:

Աշխատակազմի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչությունն իր փորձով և ինստիտուցիոնալ գիտելիքներով օժանդակել և տրամադրել է մեթոդական աջակցություն Հայաստանի այլ համայքներին՝ մշակելու իրենց քաղաքի գործողությունների ծրագրերը:

Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունից տեղեկացնում են.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության նոր պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ջրամատակարարման/ջրահեռացման վերաբերվող հարցերը գտնվում է Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատասխանատվության ներքո:

Այնուամենայնիվ, խնդրի կարևորությունից ելնելով, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության ծրագրերով մայրաքաղաքի մի շարք հասցեներում իրականացվել են ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերի կառուցման/վերակառուցման աշխատանքներ:

Աղյուսակը կցվում է:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պարբերաբար իրականացվում են Երևանի աղտոտված տարածքների գույքագրման աշխատանքներ և միջոցներ են ձեռնարկվում վերջիններիս առաջացումը կանխելու և վերացնելու ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԵՎ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ,
ՀԵՂԵՂԱՏԱՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ/ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ

	Հասցե	Խմելու ջրագծերի ներքին ցանցերի, կոյուղատար համակարգեր /գծմ/	Աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն	Ծրագիրը իրականացնող ստորաբաժանում	Շահառուներ (մոտավոր)
1	Արաբկիր 33-րդ փողոց /կոյուղագիծ/	326	վերակառուցում		80 տնատիրություն
2	Արաբկիր 35-րդ փողոց /կոյուղագիծ/	253	վերակառուցում		
3	Արաբկիր 37-րդ փողոց /կոյուղագիծ/	187	վերակառուցում		
4	Ավան, Հ.54 մանկապարտեզ /կոյուղագիծ/	351	վերակառուցում		Հ.54 մանկապարտեզ
5	Հ.Քոչարի 1-ին նրբ. /կոյուղագիծ/	216	կառուցում		10 տնատիրություն
6	Բ.Մուրադյան փող. հ.3 շենք /կոյուղագիծ/	160	վերակառուցում		120 բնակարան
	ԸՆԴԱՄԵՆԸ	2141			90-տնատիրություն 120- բնակարան 1 - մանկապարտեզ

2021

	Հասցե	Խմելու ջրագծերի ներքին ցանցերի, կոյուղատար համակարգեր (գծմ)	Աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն	Աշխատանքների գումարը ըստ պայմանագրի (համաձայնագրի)	Շահառուներ (մոտավոր)
1	Էջմիածնի խճուղի /Նորագյուղի կենտրոնի ճախակողմյան հատված/ /կոյուղագիծ/	110	Կառուցում / վերակառուցում		30 տնատնտեսություն
2	Կիլիկիա 3,4 շենքերի արտաքին ցանց /կոյուղագիծ/, և 36 տարածքի ներքին ցանց	169, 132/86	վերակառուցում		120 բնակարան և h. 8 պոլիկլինիկա
3	Նորագավիթ 13-րդ և 14-րդ փողոցներ /կոյուղագիծ/	968	կառուցում		300 տնատնտեսություն
4	Դավթաշեն 1-ին թաղ. h. 10ա շենքից մինչև Տ.Պետրոսյան փող. /կոյուղագիծ/	351	վերակառուցում		220 բնակարան
5	Դավթաշեն 2-րդ թաղ 7շ-ից դեպի 4բ շենք /կոյուղագիծ/	216	վերակառուցում		210 բնակարան
6	Բաղրամյան 3-րդ նրբանցք /ներառյալ՝ մուտքագծեր /կոյուղագիծ/	212	կառուցում / վերակառուցում		10 տնատնտեսություն + 50 բնակարան
7	Դավթաշեն 4-րդ փողոց /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/	345	վերակառուցում		150 տնատնտեսություն
8	Էստոնական փողոց 6 շենքի /կոյուղագիծ/	110	վերակառուցում		140 բնակարան
9	Նուբարաշեն Դ թաղամաս 11-րդ փողոցի վերջնամասի /կոյուղագիծ/	112	վերակառուցում		50 տնատնտեսություն
	ԸՆԴԱՄԵՆԸ	2592 / 218 (Ներքին ցանց)	կառուցում / վերակառուցում		540- տնատնտեսություն 740- բնակարան 1 – պոլիկլինիկա

2022

	Հասցե	Խմելու ջրագծերի ներքին ցանցերի, կոյուղատար համակարգեր /գծմ/	Շահառուներ (մոտավոր)	Աշխատանքների գումարը ըստ նախագծի ՀՀ ԴՐԱՄ	Աշխատանքների գումարը ըստ պայմանագրի /համաձայնագրի/ ՀՀ ԴՐԱՄ
1	Աջափնյակ վարչական շրջանի Հակոբյանց փողոցից Խ. Խաչատրյան 2-րդ նրբ. կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	264	50 տնատիրություն		
2	Աջափնյակ վարչական շրջանի 16 թաղ. 23-26 շենքերի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	219	7 շենք՝ 840 բնակարան		
3	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծերենցի 2-րդ նրբ. 19-27 տների կոյուղագծի կառուցման աշխատանքներ	355	30 տնատիրություն		
4	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Զիվանու փող. 20-54 առանձնատների կոյուղագծի կառուցման աշխատանքներ	512	35 տնատիրություն		
5	Ծենգավիթ վարչական շրջանի Ֆրունզե փողոցի /սեփական առանձնատներ/ կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	325	30 տնատիրություն		
6	Կենտրոն վարչական շրջանի Իսահակյան 38 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	226	75 բնակարան + 10 հասարակական		
7	Կենտրոն վարչական շրջանի Բուզանդի 1/3 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	18	Երևանի քաղաքապետարան		
8	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հհ27,37,39 կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	600	10 շենք՝ 120 բնակարան + 10 տնատիրություն		
9	Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 33-րդ փողոցի կոյուղագծի կառուցման աշխատանքներ	239	25 տնատիրություն		

10	Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 22-րդ փողոցի /ծննդատուն/ հեղեղատարի կառուցման աշխատանքներ	570	Հիվանդանոց + 60 տնատիրություն		
11	Նոր Նորք վարչական շրջանի Բաղյան, Գյուլբեյան, Քոչարյան փողոցների հեղեղատարի կառուցման աշխատանքներ	590	9 շենք՝ 360 բնակարան + Հիվանդանոց		
12	Էրեբունի վարչական շրջանի Բուռնազյան փողոց հ.1 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	60	20 տնատիրություն		
13	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մ. Ավետիսյան 4-րդ փողոցի /1-13 տներ/ և Լեփսիուսի փողոցի /2-4 տներ/ կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ		15 տնատիրություն		
14	Աջափնյակ վարչական շրջանի Բաշինջաղյան 1-ին նրբանցք կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	330	55 տնատիրություն + Դպրոց		
15	Արաբկիր վարչական շրջանի Փափազյան փողոց հ. 22 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ	164	140 բնակարան		
16	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սարկավագի փողոցի կոյուղագծի կառուցման աշխատանքներ	380	40 տնատիրություն		
17	Նորք-Մարաշ վարչական շրջանի /Նոր Նորքից դեպի Նորքի 1-ին նրբ. Կապուղի/ կոյուղատար համակարգի կառուցում	520	60 տնատիրություն		
18	Նորք-Մարաշ վարչական շրջանի / Այգեգործական փողոցից դեպի Նորքի 1-ին փողոց / կոյուղատար համակարգի վերակառուցում	480	80 տնատիրություն		
19	Ավանեսով 3-րդ նրբ. /հ. 160 դպրոց/ /հեղեղատար/	350	Դպրոց + 50 բնակարան		
	ԸՆԴԱՄԵՆԸ	6202	Երևանի քաղաքապետարան 2-րդ մ/շ 500- տնատիրություն 1585- բնակարան 2 - Հիվանդանոց 2- Դպրոց 10- հասարակական		

"Ecolur" Informational NGO Address: Hanrapetutyan 49/2 Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ. (+37491) 92 12 64

«Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի

գլխավոր տնօրեն պարոն Կարեն Հարությունյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Հարությունյան,

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագիրը, որի նպատակն է լայն հասարակությանն իրազեկել Երևանում և Գյումրիում իրականացվող Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին:

«Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրականացնում է «Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր»-ը: Ըստ Ծրագրի նկարագրության՝ այն իրենից ներկայացնում է 2017 թվականին կնքված՝ 80 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով ծրագրի (OpID 48957) երկարացում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 10-ամյա (2016-2027թթ.) ներդրումային ծրագրի 1-ին փուլի իրականացման համար, որն ուղղված է Հայաստանում էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքի արդիականացմանը: Այն ՀԷՑ-ին հնարավորություն կընձեռի իրականացնել ներդրումային ծրագրի 2-րդ փուլի («Ծրագիր») 2021-2022թթ-ի կապիտալ ներդրումները, որոնք, ի թիվս այլ ոլորտների, ուղղված կլինեն նաև Հայաստանի երկու խոշոր քաղաքներին՝ Երևանին և Գյումրիին: Ծրագիրը Հայաստանում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներգրավվածության երկարացումն է՝ ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրի միջոցով: «ՀԷՑ»-ի ներդրումային ծրագիրն ուղղված է «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» (GCAP) սահմանված առաջնահերթություններին և մշակվել է՝ երկու քաղաքների քաղաքապետարանների հետ սերտորեն խորհրդակցելով և հաշվի առնելով «Կանաչ քաղաքների գործողությունների պլանները», որոնք ընկած են երկու քաղաքների նկատառումների հիմքում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել.

- Այս Ծրագրի շրջանակներում ի՞նչ կապիտալ ներդրումներ է կատարել կամ կատարելու ՀԷՑ-ը:
- Ի՞նչ միջոցառումներ են նախատեսված «Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագրով», որոնք ուղղված են Երևանի և Գյումրիի «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» սահմանված առաջնահերթություններին, դրանցից որո՞նք են իրականացվել, որո՞նք՝ ոչ և ի՞նչ պատճառներով:
- Արդյո՞ք հաշվարկվել է, թե ինչքան էլեկտրաէներգիայի խնայողություն է ապահովվել Երևան և Գյումրի քաղաքներում իրականացված միջոցառումների արդյունքում և ինչքանով են կրճատվել մթնոլորտային օդ արտանետվող ջերմոցային գազերը:
- Որքա՞ն գումար է ծախսվել այդ միջոցառումների իրականացման համար:

10.01.2023թ.

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արմենակյան 127, հեռ.՝ +374 (10) 65 00 86

№ 08-ԳՏ-05/24
«17» 01 2023
Ձեր _____

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ
նախագահ Ինգա Զարաֆյանին

Հարգելի Ինգա Զարաֆյան,

Ընկերությունը գոհունակությամբ է վերաբերվում Ձեր կողմից իրականացվող «Եղիր տեղեկացված Երևանում և Գյումրիում Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին» ծրագրին, որի նպատակն է լայն հասարակությանն իրազեկել Երևանում և Գյումրիում իրականացվող Կանաչ քաղաքների պլանների և ծրագրերի մասին:

Ընկերությունը 2016-2027 թվականների համար պլանավորել և իրականացնում է լայնածավալ (347 մլրդ դրամ) ներդրումային ծրագիր: Ծրագրի շրջանակում ի թիվս այլ նպատակների առկա են աշխատանքներ, որոնք միտված են էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը: Դրանցից առավել խոշորներն են՝

- ✓ Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրման,
- ✓ 6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինման ծրագիրը:

Նշված աշխատանքներն պլանավորելիս Ընկերությունը խնդիր չի ունեցել տարանջատել դրանք ըստ Երևանի կամ Գյումրու: Դրանք պլանավորվել են Ընկերության սպասարկման ողջ տարածքի համար՝ ըստ առավել խնդրահարույցների: Արդյունքում բաշխիչ ցանցում էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների սահմանված 11.03% ցուցանիշը նվազել է դառնալով 6.5% (2016թ.-ից 2022թ.): Բաշխման ցանցում կորուստների կրճատումը կազմել է շուրջ 1.6 մլրդ կՎտ.ժ, իսկ արդյունքում մթնոլորտ ջերմային գազերի արտանետման կրճատումը կազմել է շուրջ 684 հազ տոնա:

Կից աղյուսակում ներկայացնում ենք Ընկերության կողմից 2016-2027թթ. ընթացքում Նշված ենթաուղղությունների մասին տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 (մեկ) էջ:

Կ.Հարությունյան

Կատ.՝ Յու. Գավրիլենկո
Հեռ 010 59 13 30

Տեղեկատվություն

Էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների կրճատմանը միտված, Ընկերության կողմից 2016-2027 թվականների ընթացքում իրականացված և իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ

հազ. դրամ առանց ԱԱՀ

	Ենթաուղղություններ	2016-2022	2023-2027
1	Էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի ներդրում	63 799 962	38 622 000
2	6(10) կՎ լարման ցանցերում տրանսֆորմատորների փոխարինում	5 548 306	222 000

Հավելված 3

“Ecolur” Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	**«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ** Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Երևանի քաղաքապետ
պարոն Հրաչյա Սարգսյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 9-ի N204-Ա որոշումը, դրա հիման վրա Երևանի քաղաքապետի կողմից 2014 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանն անդամագրվելու վերաբերյալ փաստաթուղթը՝ Երևան քաղաքի ավագանին 2016թ. հունիսի 24-ին N 558-Ն որոշմամբ հաստատել է Երևան քաղաքի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը»: Ծրագրի համաձայն՝ մինչև 2020թ. քաղաքային կենցաղային կոշտ թափոնների կառավարման ոլորտում էներգախնայողությունը պետք է կազմեր 7,000 ՄՎտԺ/տարի, CO_2 արտանետումների կրճատումը՝ 44,644 տոննա կամ 18%: Նուբարաշենի քաղաքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայրից նախատեսված էր մեթանի կորզում և էլեկտրաէներգիայի արտադրություն: Այս կապակցությամբ «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրում նշված է. «2009թ. մարտի 10-ին Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի հետ, Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի ներքո կնքեց համաձայնագիր՝ Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի վերաբերյալ, որը կնպաստի աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանը: Նուբարաշենի գործող թափոնակուտակիչում՝ մոտ 8 հա տարածքում, փորված հորատանցքերով և հորիզոնական գազամուղերով, մխոցների միջոցով մեթան գազը մղվում է կենտրոնական ուղղահայաց խողովակ (ջահ) և այրվում: Ծրագրի իրականացման տևողությունը 16 տարի է: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում՝ մինչև 2023թ., ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա CO_2 գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:… Նուբարաշենի մեթանի կորզման ընդլայնված

ծրագրի ակնկալվող տարեկան արտադրանքը գնահատել որպես մոտ 44,644 տ CO_2 համարժեք ջերմոցային գազի արտանետման կանխարգելում և մոտ 7.0 մլն կՎտժ էլեկտրական էներգիայի արտադրություն՝ սկսած 2019թ.»:

Երևանի կանաչ գործողությունների ծրագրում կարճաժամկետ գործողությունների թվում նշված է «ՔԿԿԹ-ների համար նոր սանիտարական աղբավայրի կառուցում, ինչպես նաև շահագործում (ՊՄԳ նախագիծ), Նուբարաշենի և Աջափնյակի գոյություն ունեցող աղբավայրերի փակում և բարելավում» գործողությունը, որի ժամկետ էր սահմանված 2018-2020թթ., շարունակվող մինչև 2030թ.: Այս ծրագրի իրականացման համար Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը տրամադրել է 8 միլիոն եվրոյի վարկ, Եվրոպական ներդրումային բանկը տրամադրել է 8 միլիոն եվրոյի վարկ, Եվրոպական միությունը՝ 8 միլիոն եվրոյի դրամաշնորհ, Շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամը (E5P)՝ 2 միլիոն եվրոյի դրամաշնորհ:

Երևանի կանաչ գործողությունների ծրագրով կարճաժամկետ գործողություններից է նաև «Դիտարկել հանրային-մասնավոր գործակցության շրջանակներում ԿԿԹ տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման հնարավորություն» միջոցառումը, ժամկետը նշված է 2018-2020թթ., հետաձգման հնարավորությամբ, ինչպես նաև «Երևանի համար Թափոնների կառավարման տասնամյա ծրագրի

մշակում» միջոցառումը, ժամկետը նշված է 2018 -2019 թթ.:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տեղեկացնել.

- 2023թ. Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի ավարտից հետո արդյո՞ք նախատեսվում է Նուբարաշենի աղբավայրում մեթանի այրման շարունակում և ի՞նչ ընկերություն է իրականացնելու այդ աշխատանքը:
- Ինչո՞ւ Նուբարաշենի աղբավայրում չի իրականացվել էլեկտրաէներգիայի արտադրություն: Եվ այս պարագայում Նուբարաշենի աղբավայրում տարեկան որքա՞ն է կազմել էներգախնայողությունը և իրականում որքա՞ն ջերմոցային գազի արտանետում է կրճատվել աղբավայրում 2009-2023թթ. ընթացքում:
- Ի՞նչ փուլում է գտնվում «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի հարևանությամբ նոր սանիտարական աղբավայրի կառուցումը, Նուբարաշենի աղբավայրի փակումը:
- «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» իրականացման ժամկետի երկարաձգումն արդյոք որևէ՞ խնդիր առաջացնում է վարկային պարտավորությունների տեսանկյունից:

- Ի՞նչ փուլում են գտնվում Երևանի կանաչ գործողությունների ծրագրով նախատեսվա «Դիտարկել հանրային-մասնավոր գործակցության շրջանակներում ԿԿԹ տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման հնարավորություն» և Երևանի համար Թափոնների կառավարման տասնամյա ծրագրի մշակում» միջոցառումների իրականացման աշխատանքները:

Հարգանքով՝
Ինգա Զարաֆյան՝
«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

25.01.2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№01/16562-23

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԿԻՆ ԻՆԳԱ ԶԱՐԱՖՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Զարաֆյան,

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հունվարի 25-ի գրության հայտնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և <<Շիմիձու>> կորպորացիայի միջև 10.03.2009թ.-ին <<Նուբարաշենի աղբավայրում բիոգազի հավաքման աշխատանքների իրականացման մասին>> ՄԶՄ ծրագրի ներքո կնքված համաձայնագիրը, ճապոնական կողմի դիմումի համաձայն, դադարեցվել է՝ ելնելով կողմերի միջև 31.10.2021թ.-ին կնքված համաձայնագրից, և համաձայն Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունվարի 26-ի թիվ 271-Ա որոշման Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում կենսագազի հավաքման և այրման կայանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է <<Երևանի քաղաքային նոր աղբավայր>> ՓԲ ընկերությանը՝ հետագա շահագործման և պահպանման նպատակով:

Նուբարաշենի աղբավայրում ջերմոցային գազերի կրճատման արդյունքում էլեկտրական էներգիայի արտադրություն չի իրականացվել՝ ելնելով մեթան գազի կորզման իրական և ծրագրի ընթացքում ակնկալվող արդյունքների անհամապատասխանությունից՝ կախված կորզված գազի քանակական և որակական ցուցանիշներից: Հավելեմ նաև, որ 2009-2023թթ. ընկած ժամանակահատվածում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ծավալները (CO2 գազի արտանետումներին համարժեք) կազմել են 176,959 տ:

Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերի փակման և Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման մրցույթը 2022 թվականի սեպտեմբերի 1-ին չեղյալ է համարվել:

Ներկայումս Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվում է վերոհիշյալ մրցույթի չկայացման պատճառների վերհանման ուսումնասիրություն, ինչպես նաև իրականացվում է

տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, որպեսզի սահմանվի նոր հայտարարվելիք մրցույթի ձևաչափը և չափորոշիչները:

Ինչ վերաբերում է Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի իրականացման ժամկետի երկարաձգման արդյունքում վարկային պարտավորություններին վերաբերվող խնդիրների առաջացմանը, ապա նշենք, որ սույն վարկը հանդիսանում է սուվերեն վարկ և համապատասխան պարզաբանում կարող է տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Երևանի կանաչ գործողությունների ծրագրով նախատեսված <<հանրային-մասնավոր գործակցության շրջանակներում ԿԿԹ տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման հնարավորություն>> միջոցառման իրականացումը կդիտարկվի նոր սանիտարական աղբավայրի կառուցումից հետո:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝ Նորա Մարտիրոսյան
ԵԿՆ ՇԻԳ ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ,
Ծրագրի ղեկավար
Հեռ. 010540973

Հավելված 4

"Ecolur" Informational NGO Address: 49/2 Hanrapetutyan, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.	ECOLUR NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY	**«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ** Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64

Երևանի քաղաքապետ
պարոն Հրաչյա Սարգսյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

Երևանում մեկ շնչին բաժին ընկնող կանաչ տարածքը Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում նշվում է շուրջ 8մ^2, ինչը ցածր է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից խորհուրդ տրվող նվազագույն արժեքից՝ 9 մ^2 մեկ շնչի հաշվով: «Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի» համաձայն՝ 2006թ. Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակ է եղել 17 մ^2 կանաչ տարածք մեկ բնակչի համար: Նախատեսում էր հանրային կանաչ տարածքների լրացուցիչ ընդլայնում ավելի քան 1,300 հա-ով, ինչի հետևանքով մինչև 2020թ-ը կանաչ տարածքի ընդհանուր մակերեսը պետք է կազմեր 2,382 հա, իսկ հետագա 15 տարիների ընթացքում պետք է եռապատկվեր: Այդ նպատակին հասնելու համար միջոցառումներից է եղել 100,000 ծառի տնկումը, որից սակայն ընդամենը շուրջ 70,000-ն է կանաչել՝ տարածքների ոչ ճիշտ ընտրության, թերի ոռոգման և պատշաճ խնամքի բացակայության պատճառով: Նոր կանաչ տարածքների ավելացման ցուցանիշը կազմել է տարեկան 15-20 հա: Գլխավոր հատակագիծը նաև նախատեսել է քաղաքի շուրջը 876 հա կանաչ պատնեշի (բուֆերային գոտու) վերստեղծում, ինչը համապատասխանում է միջազգային նորմերին, որոնք մինչև մեկ միլիոն բնակիչ ունեցող քաղաքների շուրջը պահանջում են անտառապատ օղակ 50 կմ շառավղով:

«Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում» նշված է. «Սակայն այդ ծրագրերի հաստատումից ի վեր ակնհայտ է դարձել, որ հնարավոր չէ տնկարկներ ստեղծել Գլխավոր հատակագծում նշանակված բոլոր տարածքներում. որոշ հողամասեր այլևս հասանելի չեն, մյուսները աղտոտված են կամ էրոզիայի ենթարկված:

Այսպիսով, պարզ է դառնում, որ 2020թ.-ի համար սահմանված նպատակը իրագործելի չէ: Կանաչ տարածքների ստեղծման համար առկա հանրային հողը հարկ է վերագնահատել, իսկ կանաչ տարածքների ստեղծում հասկացությունը՝ վերաձևակերպել: Նման հանգամանքներում այս թիրախի ձեռքբերման գործում պետք է իրենց կարևոր ավանդը բերեն նոր առևտրային (կոմերցիոն) զարգացումները, երբ կառուցապատողները օրենքով պարտավոր են իրենց նախագծերում ունենալ առնվազն 30% կանաչ տարածքներ»:

Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը Երևանի ռազմավարական նպատակներից է սահմանել բաց կանաչ տարածքների հարաբերակցությունը մեկ բնակչի հաշվով հասցնել 10 մ^2-ից ավելի մինչև 2030թ-ը, իսկ 2018թ-ի համար՝ 8,5 մ^2-ից ավելի: Այս նպատակներին հասնելու համար որպես կարճաժամկետ գործողություն Ծրագրում առաջարկվել է մասնավորապես.

- Մշակել և սկսել իրականացնել երկարաժամկետ կառուցապատման ծրագիր Երևանի բուսավերականգնման համար՝ ելնելով տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության արդյունքներից
- Խրախուսման մեխանիզմների միջոցով շարունակել իրականացնել տեղական էկոհամակարգերը սատարող ծրագրեր (օրինակ՝ առաջարկել թաղամասերի կանաչեցման դրամաշնորհներ, ոռոգման նորարարական լուծումների համար ֆինանսական օժանդակություն և այլն)
- Երևանի համար պատրաստել GIS-ի վրա հիմնված բնապահպանական քարտեզ
- Անտառների և կանաչ տարածքների վերականգնում
- Իրականացնել աղտոտված տարածքի վերականգնման և հարմարություններով ապահովված հանրային կանաչ տարածքի փոխակերպման փորձնական նախագիծ

Ծրագրում նշված է, որ ըստ Երևանի քաղաքապետարանի տեսլականի, Երևանը պետք է դառնա կանաչ քաղաք՝ ոչ միայն անունով, այլև արտաքին տեսքով: Երևանի քաղաքապետարանի նպատակն է, որ Երևանի քաղաքացիներին հեշտությամբ հասանելի լինեն ընդարձակ կանաչ տարածքները՝ հարուստ կենսաբազմազանությամբ, բնակեցված տեղական կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներով և բնապահպանորեն կապված քաղաքի լայն շրջակա տարածքներում գտնվող ընդարձակ անտառապատ տարածքների հետ:

Հարգելի պարոն քաղաքապետ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել հետևյալի մասին.

1. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում վերոնշալ կարճաժամկետ գործողություններից որո՞նք են իրականացվել Ծրագրի հաստատումից ի վեր:

2. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի համաձայն՝ Երևանի գլխավոր հատակագծով սահմանված կանաչապատման նպատակների չիրականացման հետևյալ պատճառներից նշված են հողամասերի անհասանելի լինելը, հողերի աղտոտված կամ էրոզիայի ենթարկված լինելը, թերի ոռոգումը և պատշաճ խնամքի բացակայությունը: Կանաչ տարածքների ստեղծման համար անհրաժեշտ է համարվել առկա հանրային հողը վերագնահատել, կառուցապատողների կողմից նախագծերում ունենալ առնվազն 30% կանաչ տարածքներ:

- Քանի՞ հեկտար հողատարածք է դարձել կանաչապատման համար անհասանելի, ինչ պատճառներով և քանի՞ հեկտար ազատ տարածք ունի Երևան քաղաքը կանաչապատման համար՝ ապահովելու Երևանում 1 շնչին բաժին ընկնող կանաչ տարածքի ավելացում՝ համապատասխանեցելու Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի ցուցանիշներին:
- Քանի՞ հեկտար հողատարածք է աղտոտված կամ էրոզիայի ենթարկված, ի՞նչ միջոցառումներ են իրականացվում այդ հողերի վերականգնման համար:
- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվում ոռոգման խնդիրները լուծելու համար:
- Արդյոք կա՞ պահանջ կառուցապատողների կողմից նախագծերում ունենալ առնվազն 30% կանաչ տարածք և ինչպե՞ս է դա ձևակերպված:

3. Երևանի կանաչապատման ի՞նչ ռազմավարական փաստաթղթեր են նախատեսվում մշակել և կյանքի կոչել:

4. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի միջոցառումների համաձայն՝ Երևանում 2017թ. դրությամբ նորատունկ բուսականությունը նախկինի համեմատությամբ ունի փոշու և գազի կլանման ավելի ցածր կարողություններ: Երևանում վերջին տարիներին իրականացվող ծառատնկումներում ի՞նչ ծառատեսակներ են օգտագործվում և օգտագործվելու, որոնք ունեն բարձր կարողություններ փոշու և գազի կլանման համար, որոնք կստեղծեն փոշու բնական պատնեշ:

5. «Էրեբունի» անտառպետության 51 հա անտառային հողերը գտնվում են Նուբարաշենի կոշտ կենցաղային աղբավայրի հարևանությամբ, և այս անտառպետության տարածքից է 24.42 հեկտար անտառային հող տրամադրվել նոր աղբավայրի կառուցման համար: ՀՀ կառավարության կողմից 2007-ի օգոստոսի 30-ին ընդունված «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման 8.1 կետով օգտագործման տրամադրվող անտառային տարածքի դիմաց տնտեսվարողը պետք է առնվազն կրկնապատիկ անտառապատման աշխատանքներ

իրականացնի: Խնդրում ենք նշել, թե Երևանի քաղաքապետարանը որ տարածքներն է տրամադրել անտառապատման համար «Էրեբունի» անտառպետության 24.42 հեկտարի փոխարեն:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,

կենսաբանական գիտությունների թեկնածու

13.02.2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 17/27878-23

«ԷԿՈԼՈՒՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ԻՆԳԱ ԶԱՐԱՖՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Զարաֆյան,

Ի պատասխան Ձեր 13.02.2023թ. Երևանի քաղաքապետին ուղղած Դ-18042-23 գրության, կապված Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում գրությամբ պահանջված տեղեկատվության տրամադրման հետ, հայտնում եմ, որ «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի շրջանակներում 2019 թվականից հետո իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Երևանյան լճի ափամերձ տարածքների մաքրում. համաձայն Երևանի ավագանու կողմից 2021 թվականի մայիսի 25-ի N383-Ա որոշմամբ հաստատված «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագրի՝ մաքրվել են Երևանյան լճի ափամերձ տարածքներն աղբով պատված եղեգներից (10հա) և կենցաղային թափոններից (12000 խմ), տեղադրվել է աղբառրսիչ ճաղավանդակ՝ թափոնների մուտքը Երևանյան լիճ կանխարգելելու նպատակով: Ներկայումս տարածքը բարեկարգվում և կանաչապատվում է:
- Նախագծվել է Գետառի վրա ջրերի մաքրման կայան «Գետառի վրա մաքրման կայանի բնապահպանական 2023թ. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագրով, որի կառուցումը կիրականացվի 2023 թ.:
- 2023թ. նախատեսվում է Հրազդան գետի վրա տեղադրել ևս 2 աղբորսիչ հարմարանք:
- Տրանսպորտային ցանցի բարեփոխումների մոնիթորինգի իրականացման նխատակով 2022թ. ձեռք է բերվել օդի որակի մոնիթորինգի 5 սենսոր, որոնք հնարավորություն են տալիս առցանց կարգով հետևելու օդի մեջ ազոտի երկօքսիդի և փոշու մասնիկների պարունակությունը:
- ներդրվել է Երևան քաղաքում աղբի տեսակավորման մշակույթը, համաձայն որի Երևանում աղբի տեսակավորման (ապակի, պլաստիկ, թուղթ) համար քաղաքի ընդհանուր շուրջ 120 կետերում համապատասխան գունազատմամբ տեղադրվել են աղբամաններ և ամենօրյա ռեժիմով իրականացվում է տեսակավորված աղբի տեղափոխման գործընթացը: 2023թ. նախատեսվում է ընդլայնել տեսակավորման աղբամանների քանակը:
- լրամշակվել են բնապահպանական իրավակարգավորումներ, մասնավորապես Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշումները և դրանց լրամշակումները /36-Ն, 48-Ն, 605-Ն և այլն/, որոնք միտված են բարելավելու Երևան քաղաքում շրջակա միջավայրի վիճակը:

- մայրաքաղաքի տարբեր հատվածներում միջանկյալ անտառաշերտի ստեղծում, կանաչ տարածքների ավելացում, մասնավորապես. 2022 թվականի ընթացքում հիմնվել են Ծիծեռնակաբերդի բարձունքի 8,5 հա վրա անտառտնկարկ և Սարալանջում 6 հա վրա անտառվերականգնման և հիմնման աշխատանքներ: Ծիծեռնակաբերդի բարձունքում տնկվել է շուրջ 4300 ծառաթփատեսակ, իսկ Սարալանջում 1650 ծառաթփատեսակ: Նշված ծառաթփատեսակներն ունեն ֆունկցիոնալ նշանակություն և հանդիսանում են ուրբան անտառների հիմնման հիմնական ծառատեսակներ/թխկի, հացենի, գլեդիչիա, կերլեյթերիա, ռոբինիա կեղծակացի, դրախտածառ, վայրի պտղատուներ և այլն/: Անտառապաշտպան գոտիներ ստեղծելու հեռանկարային համաքաղաքային նշանակության ծրագրերից են՝ Զրաշխարհի աջակողմյան լանջի անտառապաշտպանիչ գոտու, Սիլիկյանի անտառապաշտպան գոտու և Նուբարաշենի անտառապաշտպան գոտու ստեղծումը:

- Սկսած 2021թ. բարեկարգվել և կանաչապատվել են Քանաքեռ ՀԷԿ-ի հարակից այգին, Նոր Արաբկիր / մոլոկանի/ զբոսայգին, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածը, Վերածննդի այգին, Սիրո և հավատի այգին, Սարյանի անվան պուրակը: 2022թ. մեկնարկել է Խ. Աբովյանի անվան պուրակի և 40ամյակի այգու բարեկարգման և կանաչապատման աշխատանքները:

- Կանաչապատ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողապաշտպան միջոցառումներն իրագործելու նպատակով քաղաքը որդեգրել է հետևյալ գիտահեն քաղաքականությունը.

1. կայուն, արժեքավոր, գեղազարդ և մշտադալար ծառատեսակների ընտրություն՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիմայական և բնական պայմաններն ու առանձնահատկությունները, գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ,
2. հողերի աղտոտվածության նվազեցման միջոցառումներ՝ թփաշերտով մեկուսացում փողոցին հարող տարածքից,
3. կանաչ ցանկապատերի ստեղծում՝ տարբեր հարկաշարքային բուսականության տեղադրությամբ,
4. միամյա մեծաքանակ ծաղիկների մասամբ փոխարինումը բազմամյա և տարեշրջանային հերթագայմամբ ծաղկող թփերով՝ տեղանքային ճարտարապետային մոտեցմամբ:
5. Երևանի քաղաքապետարանի կողմից մշակել է ռազմավարություն, որ այսուհետ Երևան համայնքում տնկվելու են հիմնական դենդրոֆլորիստիկ դեմք կազմող տարբեր ցեղերի ծառերի արժեքավոր և գեղատեսիլ տեսակներ և դրանց պարտիզային ձևեր՝ սոսի, թխկի, կատալպա, կերլեյթերիա, կաղնի, ձիակասկ և այլն, ինչպես նաև տունկ իրականացվելու է միայն ոռոգվող տարածքներում:

- Երևան քաղաքի ոռոգման ցանցի արդիականացման, ընդլայնում և վերակառուցում նպատակով գույքագրվել է Երևան քաղաքի ոռոգման ցանցը, այդ թվում նաև պոմպակայանները խորքային հորերը: Մայրաքաղաքի ամբողջ ոռոգման համակարգի երկարությունը 321 կմ է, որից 90 կմ-ն է նորմալ վիճակում, իսկ մնացած մասը մաշված է կամ խցանված, կամ էլ վթարային է: 2019-2020թթ. ժամանակահատվածում իրականացված ոռոգման ցանցի գույքագրման և վերլուծության արդյունքում 2021թ. Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում անցկացվել, փոխարինվել է շուրջ 22.6 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ և վերականգնվել է մոտ 8 կմ երկարությամբ խցանված ջրագիծ: 2022 թվականի երկրորդ կիսամյակում վերանորոգվել և անցկացվել է շուրջ 18500 գծմ: 2023 թվականին նախատեսվում է անցկացնել շուրջ 30000 գծմ:

- Ներկայումս ընթացքի մեջ է Երևան քաղաքում կանաչ տարածքների գույքագրման գործընթացը,

- Սկսած 2019 թ. ամբողջությամբ վերափոխվել է ջերմոցատնկարանային տարածքը, որտեղ աճեցվում են քաղաքի կարիքների համար ծառաթփատեսակներ և ծաղիկներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

X

ԳԱՅԱՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԿԱՏ.՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԵՌ. 011-514-263